Ճանաչի՛ր ինքդ քեզ

Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Крутюн» (образование) еженедельник 24.02.2021թ. չորեքշաբթի թիվ 9 (982)

Գրաբար

Ի՞նչ է **գրաբարը**. մեր **մայրենի լեզվի** ժամանակային մի *փո՞ւլը*, թե՞ մեր հնագույն լեզվի միայն *գրավոր* մի տարբերակը... Մեր ավագագույն արքեպիսկոպոսներից՝ երջանկահիշատակ Արսեն սրբազանը մի առիթով հիշեց. Վազգեն Ա վեհափառը հաճախ էր հարցնում՝ *տեսնես երբեւէ գրաբար խոսե՞լ ենք...* Մեզանում վաղուց կա այն մտայնությունը, թե դեռեւս վաղնջական ժամանակներից *գրաբարը* եղել է միայն *գրավոր լեզու*, *գրավոր* խոսքի միջոց, իսկ ընդհանրապես կենցաղում ի սկզբանե կիրառել ենք *աշխարհաբարը*:

Դրա պատճառը, թերեւս, հենց ***գրաբար*** բառի մեջ է՝ ***գրա - բար***: Առաջին բաղադրիչն անմիջապես *գիր*-ն է մատնանշում եւ *բար* բաղադրիչը թվացել է ոչ էական, այն պարզապես ընկալվել է որպես վերջածանց, եւ այստեղից էլ *գրաբարը* ընկալվել է որպես *գրելու* լեզու, *գրավոր* հաղորդակցվելու միջոց:

Գիր եւ **բար**: Անշուշտ՝ ոչ *բառ* (թեեւ *բառ*-ը որպես խոսքի *պտուղ*, խոսքի մի *մաս,* ծագում է հենց *բար*-ից): **Բար**՝ *պտուղ, բերք*... Ինչո՞ւ *գրաբար*-ը չընթերցել որպես *գրի բերք*, *գրավոր հունձք*, *ողջ գրավոր պաշարը* (տեղին է նկատել, որ *աբար* վերջածանցի արմատը դարձյալ *բար = պտուղ*-ն է). այն ամենը, ինչ արարվել, հավաքվել, մշակվել, դարձել է *մատյան, երգ, դեղատոմս, շարակնոց, մաշտոց*... Ողջ ստեղծագործ միտքը, գեղարվեստական ու տեղեկատվական ողջ հավաքչությունը... *Գրաբար*, այսինքն՝ ոչ միայն լեզու, այլեւ այդ լեզվով արտահայտված ողջ *խոսքը*, ստեղծված ողջ գանձարանը, եւ լեզվի հնարավորություններն էլ (հետագա ստեղծվելիքը)՝ դրան գումարած... *Լեզուն մտածողություն է*: Ուրեմն մեր ժողովրդի ողջ իմաստությունն է ամբարված *գրաբարում*: Եվ կամ մեր ժողովրդի ողջ իմաստությունը, գոնե զգալի մասը, արարված է *գրաբարով*...

Այսպես, թե այնպես, նվազագույնը 4500 տարի մտածել, գրել եւ համաժամանակյա արժեքներ ենք ստեղծել հենց *գրաբարով*: Չմոռանանք, որ աշխարհաբար գրական հայերենը ընդամենը 200 տարվա պատմություն ունի:

Աշխարհի խոշորագույն համալսարաններում (նաեւ մեզանում) որպես կանոն ուսումնասիրում են *լատիներեն*: Ինչո՞ւ: Անշուշտ՝ ոչ այդ լեզուն կենցաղում գործածելու համար: Թեեւ որպես թեւավոր խոսք՝ լատիներեն մեջբերումները զարդարում են եվրոպական հենց լատիներենի հիման վրա զարգացած հայտնի լեզուները (չմոռանանք՝ լեզուն մտածողություն է): Լատիներեն սովորում են, որպեսզի կարողանան լատիներեն բնագրեր ուսումնասիրել: Որովհետեւ այդ լեզվով ստեղծված, նկարագրված եւ պահպանված են համամարդկային մտքի մնայուն արժեքներ...

Իսկ գրաբարո՞վ...

Միայն Մատենադարանում պահվող ձեռագրերի հազիվ միայն մեկ երրորդն է ամբողջությամբ ուսումնասիրված, ծանոթագրված, հրատարակված... Կարելի՞ է լինել լիարժեք բանասեր, պատմաբան՝ առանց գրաբարի իմացության... Իսկ իրավաբա՞ն, տնտեսագե՞տ, բժի՞շկ, աստվածաբա՞ն... Մարդկային մտավոր գործունեության բոլոր ոլորտներում, մարդու մարմնի իսկ հետազոտությունից մինչեւ հեռավոր աստղերի դիտարկումները, մեր նախնիներն այնքան հիմնարար եւ այնքան մանրակրկիտ տեղեկատվություն են հայթայթել հաջորդող սերունդների համար, որ առանց դրա այսօր պարզապես հնարավոր չէ որեւէ ամբողջական ուսումնասիրություն կատարել...

Այսքանից հետո ասե՞նք, թե՞ չասենք, որ այսօր գրաբար սովորեցնում ենք միայն Գեւորգյան հոգեւոր ճեմարանում եւ հատուկետ բուհերի հատուկենտ բաժանմունքներում... Ասե՞նք, թե չասենք, որ գրաբարից հեռանալով հեռացել ենք ինքներս մեզանից եւ աստիճանաբար նաեւ այն հոգեւոր պաշարից, ինչը եղել եւ մնում է մեր հպարտության առարկան՝ մեր ընդհանրական մշակույթից... Անկախությունը վերագտած մեր հայրենիքի կրթական համակարգի բարեփոխումների ծիրում հարկ է, որ **գրաբարը մտնի հանրակրթական դպրոց**: Գոնե ավագ դասարաններ: Իսկ բուհերում, կարծում ենք, պիտի ուսումնասիրվի համատարած եւ ըստ արժանվույն:

Աշխարհի ամենահարուստ ու ամենագեղեցիկ լեզվին տիրապետելով՝ կունենանք նույնքան հարուստ եւ նույնքան գեղեցիկ ներաշխարհ:

Ամենաանաղարտ հայերենը գրաբարն է:

Գ. Մ.

Համակարգ

Բոլոր հայտարարությունները՝ *«Կրթություն»* շաբաթաթերթում

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Վահրամ Դումանյանի** հրամանով հաստատվել է ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի նոր կարգը: Նոր կարգավորմամբ հստակեցվել է մրցույթի հայտարարման պայմանները, ժամկետները, ընթացակարգը:

Հիմնական նորույթներից մեկն այն է, որ մրցույթ է հայտարարվում միայն այն դեպքում, երբ նույն դպրոցում աշխատող համապատասխան առարկայի մասնագետն ապահովված է առնվազն 22 դասաժամ ծանրաբեռնվածությամբ կամ առկա է նրա գրավոր հրաժարվելու փաստը: Սահմանվել է նաեւ հրապարակման եւ հանրային հրազեկման բարձր պահանջ:

շարունակությունը՝ էջ 4

Դիմորդ - 2021

Արմատական փոփոխություն ընդունելության կարգում

ԿԳՄՍ նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել *«Հայաստանի Հանրապետության պետական եւ ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգը հաստատելու մասին»* Կառավարության՝ 2012 թվականի ապրիլի 26-ի N 597-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին նախագիծը:

Ըստ այդմ՝ առաջարկվող փոփոխությունները հիմնականում վերաբերում են ընդունելության քննությունների եւ մասնագիտությունների հայտագրման գործընթացին, անցկացման ժամկետներին եւ հայտագրման եղանակին:

շարունակությունը՝ էջ 8

Քննարկում

Գիտնականները հայտնել են իրենց մտահոգություններն ու առաջարկները

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Վահրամ Դումանյանը** Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության անդամների հետ քննարկել է Ազգային ժողովում նախորդ շաբաթ առաջին ընթերցմամբ ընդունված *«Բարձրագույն կրթության եւ գիտության մասին»* օրինագիծը: Հանդիպման ընթացքում ԳԱԱ նախագահ **Ռադիկ Մարտիրոսյանն** ու նախագահության մյուս անդամները ներկայացրել են նախագծով առաջարկվող նոր կարգավորումներին առնչվող իրենց հիմնական մտահոգություններն ու հանդես եկել առաջարկներով:

շարունակությունը՝ էջ 2

Գիտնականները հայտնել են իրենց մտահոգություններն ու առաջարկները

սկիզբը՝ էջ 1

ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը նշել է, որ 2019 թվականի սեպտեմբերին՝ նախագծի աշխատանքային տարբերակին ծանոթանալուց հետո, քննարկումներ են եղել ԳԱԱ կազմում գործող ինստիտուտների, ակադեմիայի թղթակից անդամների եւ նախագահության հետ, կազմակերպվել են հանդիպումներ նախարարության պատասխանատուների մասնակցությամբ, եւ ակադեմիայի կողմից բարձրացված մի շարք խնդիրներ այժմ Ազգային ժողովում գտնվող նախագծում լուծում են ստացել: Սակայն, վիճահարույց մի շարք հարցեր դեռեւս լուծված չեն: Մասնավորապես ակադեմիայի ներկայացուցիչների համար առաջնային է ԳԱԱ կարգավիճակի հարցը. նրանք գտնում են, որ օրինագծով պետք է հստակ ամրագրվեն ակադեմիայի՝ որպես գիտական կառույցի դերակատարումն ու գործառույթները:

Ըստ ԳԱԱ նախագահի՝ ընդունելի չէ նոր օրինագծում գիտության եւ բարձրագույն կրթության ոլորտները կարգավորող՝ *«Բարձրագույն եւ հետբուհական կրթության»*, *«Գիտության եւ գիտատեխնիկական գործունեության»*, *«ԳԱԱ մասին»* օրենքների միավորումը մեկ իրավական ակտի մեջ:

«Օրենքների միավորումը ո՛չ բարձրագույն կրթության, ո՛չ էլ գիտության զարգացմանը չի նպաստելու, որովհետեւ այս երկու բնագավառները, ունենալով ընդհանրություններ, զարգանում են տարբեր տրամաբանությամբ»,- նշել է Ռադիկ Մարտիրոսյանը՝ ավելացնելով, որ չնայած սուղ ֆինանսավորմանը՝ ՀՀ ԳԱԱ կազմում գործող 12 ինստիտուտներ ընդգրկված է գիտական ամսագրերի, գրքերի եւ գիտաժողովների աշխատանքներին հղում կատարող տվյալների ամենամեծ շտեմարանի՝ Scopus-ի՝ ըստ գիտական նվաճումների դասակարգած աշխարհի 8800 գիտական կազմակերպությունների ցանկում:

ԳԱԱ նախագահի խոսքով՝ եթե հնարավոր լիներ գիտության ֆինանսավորումն ավելացնել, դա ավելի կնպաստեր գիտության զարգացմանը, քան նոր օրենք մշակելը: *«1991թ-ից մինչեւ հիմա Հայաստանում գիտության ֆինանսավորում չի եղել: Չնչին ֆինանսական միջոցներով հնարավոր է եղել պահպանել գիտական կազմակերպությունները»*,- ընդգծել է Ռադիկ Մարտիրոսյանը:

ԳԱԱ նախագահը նշել է, որ, ըստ օրինագծի հիմնավորման, ակադեմիական ինստիտուտներն ինքնուրույն եւ ազատ չեն իրենց կառավարման համակարգում, ինչը ընդունելի մոտեցում չէ: *«ԳԱԱ ինստիտուտների կոլեկտիվներում անցկացվեցին քննարկումներ եւ փակ գաղտնի քվեարկություն: Արդյունքում՝ մասնակիցների 90 տոկոսը դեմ եղան ակադեմիայի համակարգից դուրս գալուն: Վատ է, որ այդ օրենքը գրելուց ակադեմիայի համակարգից մարդ չի մասնակցել,- նշել է Ռադիկ Մարտիրոսյանը եւ շարունակել,- գիտությունը զարգանում է ի շնորհիվ գիտական արդյունքների քննարկման, ծրագրերի կազմման, ընդհանուր գաղափարախոսության զարգացման ձեւով: Ակադեմիայի բրենդը նրանում է, որ նա նպաստում է գիտության զարգացմանը իր կառուցվածքով, իր ինստիտուտներով: ԳԱԱ բաժանմունքները ցանց են, որոնց շրջանակում քննարկվում են գիտական հարցերը»*: Նա, մասնավորապես, առաջարկել է օրինագծի 26-րդ հոդվածը ձեւակերպել հետեւյալ կերպ. *«ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան պետության կողմից հիմնադրած ոչ առեւտրային գիտական կազմակերպություն է, որն ունի պետության կողմից սահմանված կարգով խորհրդատվություն տրամադրելու եւ հանրապետության հիմնարար հետազոտությունները համակարգելու իրավասություն»*:

Ակադեմիայի նախագահության ներկայացուցիչները բարձրացրել են ակադեմիական ինստիտուտների հետագա գործունեության, կառավարման եւ գիտության ֆինանսավորման հարցերը:

Առաջարկ է եղել հրաժարվել մեկ գիտական աստիճանի անցնելու դրույթից՝ պահպանելով ասպիրանտուրայի ինստիտուտը գիտական կազմակերպություններում՝ որպես երիտասարդությանը գիտության մեջ ներգրավելու օղակ:

Մյուսը Բարձրագույն որակավորման հանձնաժողովի՝ ԲՈՀ-ի հարցն էր: *«Մենք համաձայն չենք, որ ԲՈՀ-ն է վերացվում: Մեր գիտության համար մենք առաջնահերթ պետք ունենանք պետական լիազորված կառույց, որը վերահսկի այդ գործընթացը»*,- նշել է Ռադիկ Մարտիրոսյանը:

ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը, պարզաբանելով բարձրաձայնված խնդիրները, համոզմունք է հայտնել, որ եւ՛ ակադեմիական հանրության, եւ՛ պետության նպատակներն ընդհանուր են, այն է՝ ունենալ մրցունակ եւ զարգացած գիտություն: Տարբերությունը մոտեցումների մեջ է: Ակադեմիկոսների կողմից հաճախ հիշատակվող խորհրդային ժամանակների գործունեության մոդելը, երբ ակադեմիան ստանում էր խոշոր ֆինանսավորում, ըստ նախարարի, այսօր չի կարող գոյություն ունենալ կամ վերականգնվել:

«Պետք է իրատես լինենք եւ հասկանանք, որ մենք այսօր գտնվում ենք տնտեսական եւ հասարակական բոլորովին այլ իրավիճակում: Խորհրդային Միությունն իր անսահման ֆինանսական ռեսուրսներով վաղուց այլեւս չկա:

Ես գտնում եմ, որ բարձրագույն կրթությունն ու գիտությունը միմյանցից անջատելը նպատակահարմար չէ: Այս երկու համակարգերը պետք է դիտարկել՝ որպես մեկ ամբողջություն, եւ պետք է կարգավորումը տալ միասնական օրենքով: Ես համամիտ եմ, որ օրենքի նախագծում պետք է ամրագրել ֆինանսավորման կոնկրետ ծավալ՝ հաշվի առնելով գիտության շահը եւ պետության հնարավորությունները»,- նշել է նախարարը՝ ավելացնելով, որ նախագծի առնչությամբ հանրային հարթակներում հնչող՝ *«ակադեմիան քանդելու, գիտությունը ոչնչացնելու»* մասին որակումները կառուցողական չեն ու խաթարում են շահագրգիռ քննարկում ծավալելու եւ արդյունավետ լուծումներ գտնելու տրամաբանությունը:

Վահրամ Դումանյանն ընդգծել է, որ ներկայացված որոշ առաջարկներ, մասնավորապես՝ ակադեմիային գիտական կազմակերպությունների գիտամեթոդական ղեկավարում իրականացնելու գործառույթ վերապահելու եւ այդպիսով հիմնարար հետազոտությունների համակարգում իրականացնելու, ինչպես նաեւ օրինագծում ֆինանսավորման հստակ ցուցանիշներ (առաջարկ է եղել ՀՆԱ-ի 4 տոկոսը) ամրագրելու առաջարկները կքննարկվեն *«Բարձրագույն կրթության եւ գիտության մասին»* նախագծի երկրորդ ընթերցման ժամանակ:

Ինչ վերաբերում է ակադեմիական ինստիտուտների հետագա գործունեությանը, ապա, նախարարի խոսքով, ըստ նախագծի, դրանք կգործեն որպես առանձին գիտական կազմակերպություններ, որոնց կառավարման գլխավոր մարմինը 8 անդամից բաղկացած խորհուրդը կլինի. 5 անդամը՝ գիտական համայնքի, 3-ը՝ լիազոր մարմնի կողմից առաջադրված: Ըստ օրինագծի՝ ինստիտուտներին տրվում է գործունեության ազատության՝ ներառյալ կոնսորցիումներում ընդգրկվելու, բուհերի եւ տարբեր գիտական կազմակերպությունների հետ միավորվելով՝ ցանցեր ստեղծելու հնարավորություն:

«Այսինքն՝ պետությունն ուզում է ոչ թե սահմանափակումներ մտցնել, այլ գիտական կազմակերպություններին տալ գործունեության ազատություն: Դա ամենեւին չի նշանակում, թե ԳԱԱ ենթակայությամբ գործող գիտական ինստիտուտները դժգոհ են, կամ իրենց վրա մինչ այժմ ճնշումներ են գործադրվել: Չկա նման բան, տրվում է գործունեության ազատություն: Սա պետության քաղաքական մոտեցումն է՝ գիտական կազմակերպությունը պետք է գործունեության ազատություն ունենա, ինքնուրույն կառավարվի եւ ստանա ֆինանսավորում: Առաջարկում եմ մինչ այժմ եղած իրավիճակին մոտենալ քննադատաբար եւ ընդունել, որ գիտությունը տիտղոսներով չի զարգանում: Ընդունելով ֆինանսական բաղադրիչի խնդիրը՝ պետք է նաեւ ընդունենք, որ զարգացում լինում է այն ժամանակ, երբ գիտնականը զբաղվում է գիտական գործունեությամբ»,- նշել է Վ. Դումանյանը՝ հավելելով, որ ԳԱԱ համակարգում գործող ավելի քան 30 ինստիտուտների ֆինանսավորման եւ գործունեության արդյունավետության հարցը պետք է, ի վերջո, դիտարկվի, եւ վաղուց կուտակված խնդիրների լուծմանը պետք է մի օր գնալ, որքան էլ այդ լուծումները ծանր լինեն:

Հանդիպման ընթացքում ելույթներ են ունեցել ԳԱԱ ակադեմիայի փոխնախագահ **Յ. Շուքուրյանը**, նախագահության անդամներ **Է. Ղազարյանը, Յ. Սուվարյանը, Ա. Հախումյանը, Վ. Բաղդասարյանը, Գ. Պողոսյանը, Ռ. Հարությունյանը**, ԿԳՄՍՆ գիտության պետական կոմիտեի նախագահ **Ս. Հայոցյանը**:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

«Լավագույն ուսանող»

Պարգեւատրվել են մրցույթի հաղթողները

2020 թվականի *«Լավագույն ուսանող»* մրցույթի հաղթողների պարգեւատրման հանդիսավոր արարողությանը մասնակցել են ԿԳՄՍ նախարար **Վահրամ Դումանյանը**, նախարարի տեղակալները, բուհերի ռեկտորներ եւ ուսանողներ: Միջոցառման սկզբում ներկաները մեկ րոպե լռությամբ հարգել են Արցախյան վերջին գոյամարտի ընթացքում նահատակված հերոսների հիշատակը:

Հաղթողներին հանձնելով հավաստագրեր ու նվերներ՝ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը նշել է, որ *«Լավագույն ուսանող»* մրցույթում հաղթող ճանաչվելը հպարտանալու առիթ է, բայց միեւնույն ժամանակ նաեւ պատասխանատվություն եւ ձեռք բերածը նորովի վերարժեւորելու եւ հաջողությունը շարունակելու կարեւոր նախապայման: *«Մրցույթով նպատակ ունենք այս կերպ եւս բացահայտել ու խրախուսել բուհերի այն ուսանողներին, որոնք ցուցաբերել են բարձր առաջադիմություն եւ իրենց առավել ակտիվ են դրսեւորել համապատասխան մասնագիտական ոլորտներում: Շատ կարեւոր է, որ այս մրցույթի շրջանակում բուհերի ուսանողների միջեւ բարձրանա մրցակցությունը, ինչը նպաստավոր է որակական առաջընթացի, հետաքրքրությունների ընդլայնման, ինքնադրսեւորվելու հնարավորությունների խթանման եւ կարողությունների բացահայտման առումով: Սիրելի՛ երիտասարդներ, ապագայի կերտման ճանապարհին մենք ձեր լավագույն գործընկերն ենք, աջակիցն ու հովանավորը: Ուս ուսի, ձեռք ձեռքի տված շատ անելիքներ ունենք մեր պետության կայացման եւ առաջխաղացման գործում: Ձանք մի՛ խնայեք ձեր նախընտրած ոլորտում կայանալու, նոր ասելիքով հանդես գալու, լավագույն ապագան կերտելու համար: Խորը ցավով եմ նշում, որ մեր ուսանողները եւս հանուն հայրենիքի իրենց կյանքը չխնայեցին եւ հերոսացան: Դուք այժմ կրկնակի եռանդով պետք է աշխատեք՝ տեր լինելով նաեւ նրանց կորցրած ապագային: Լավագույնները միայն ներկաները չեն. դուք լավագույնների ներկայացուցիչն եք, քանի որ մենք ունենք հրաշալի երիտասարդություն եւ ուսանողություն: Դուք պետք է գիտակցեք, որ այս երկրի իրական տերն եք ու մեր երկիրը տանելու եք դեպի զարգացում եւ հզորացում: Անվտանգությունը սկսվում է կրթությունից. մտքով ու գաղափարով պետք է ապահովենք մեր անվտանգությունը»*,- նշել է նախարարը՝ ուսանողներին մաղթելով անսպառ եռանդ, բարձր պատասխանատվություն, սեր եւ նվիրում նախընտրած ոլորտում:

Մասնակիցներին ողջունել է նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ, մրցութային հանձնաժողովի նախագահ **Արթուր Մարտիրոսյանը**՝ նշելով, որ հանձնաժողովը դժվարությամբ է ընտրել լավագույններին, քանի որ մրցույթն անցել է բավականին մրցակցային պայմաններում. *«Չնայած մեր երկրին պատուհասած մարտահրավերներին՝ համավարակին եւ Արցախյան պատերազմին, այդուհանդերձ, որոշում կայացրեցինք անցկացնել մրցույթը, քանի որ հատկապես նման իրավիճակում կարեւոր է ընդգծել գիտելիքի դերը, իսկ այս մրցույթը հենց դրա մասին է: Հիմա, առավել քան երբեւէ, ուսանողները պետք է լավ սովորեն՝ կիրթ ու կարողունակ հասարակություն եւ զարգացած պետություն ունենալու համար»*:

Մրցութային հանձնաժողովի անդամ, Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի պրոռեկտոր **Կոնստանտին Ենկոյանը** ներկայացրել է, թե ինչպես եւ ինչ սկզբունքով են ընտրել լավագույններին: *«Ունեցել ենք շատ բուռնքննարկումներ: Պատկերացրե՛ք մի տեղ, որտեղ հավաքվում են բժիշկներ, բնագետներ, հումանիտարներ, գեղարվեստի ոլորտի ներկայացուցիչներ, որտեղ մոտեցումները եւ մենթալիտետը տարբեր են, բայց մենք փորձել ենք բոլորին նույն հարթության վրա, նույն կոնտեքստում եւ նույն արդար հիմքերի վրա դիտարկել: Մեկ առ մեկ քննարկել ենք յուրաքանչյուր հայտ: Քննարկումները գիտական հոդվածների շուրջ հասնում էին մինչեւ գագաթնակետ՝ թեզի՞ս է, թե՞ հոդված է, ազդեցության գործոններ եւ այլն»*,- պատմում է մրցութային հանձնաժողովի անդամը:

Լավագույնը ճանաչված ուսանողներին ողջունել ու շնորհավորել են նաեւ Գավառի պետական համալսարանի ռեկտոր **Ռուզաննա Հակոբյանը** եւ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ռեկտորի պարտականությունները կատարող **Ռուբեն Աղգաշյանը**: Ռուզաննա Հակոբյանը երախտագիտություն է հայտնել լավագույն ուսանողների ուսուցիչներին եւ դասախոսներին՝ սիրով ու նվիրումով աշխատելու եւ տարիներ շարունակ լավագույն արդյունքներ արձանագրելու համար:

Միեր Խաչատրյանը ԵՊՀ-ի ֆիզիկայի ֆակուլտետում է սովորում: 1-ին հորիզոնականը զբաղեցրած երիտասարդը նաեւ ցուցաբերում է գիտական ակտիվություն: *«Ես զբաղվում եմ աստղաֆիզիկայով, ունեմ տպագրված, բարձր impact factor ունեցող հոդվածներ, որոնք ինձ ավելի են մոտեցրել այսօրվա մրցանակին»*,- ասում է Միերը՝ բոլոր ուսանողներին խորհուրդ տալով, սկսած բարձր կուրսերից, զբաղվել գիտական ակտիվությամբ: **Գոհար Քոլոզյանը** սովորում է Խա-չատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում: *«Մեզ չէին տեղեկացրել՝ մրցանակային որ տեղն ենք զբաղեցրել, այդ պատճառով էլ հուզմունքը մեծ էր: Գիտելիքն այն զենքն է, որով կարողանալու ենք մեր հայրենիքը շենացնել եւ հզորացնել»*,-վստահություն է հայտնում Գոհարը:

Նշենք, որ մրցույթն անցկացվել է՝ ըստ կրթական աստիճանների՝ բակալավր ու մագիստրոս, եւ ըստ 7 ոլորտների՝ բնագիտություն, հասարակագիտություն, հայագիտություն, հումանիտար, բժշկություն, ճարտարագիտություն եւ մշակույթ-սպորտ: Մրցույթում հաղթող են ճանաչվել 38 ուսանողներ, որոնք ներկայացրել են հանրապետության 16 բուհ: 1-ին տեղ է գրավել 13 ուսանող, որոնց կշնորհվի 415.000-ական դրամ, իսկ 2-րդ տեղ՝ 13 ուսանող, որոնք կստանան 305.000-ական դրամ կրթաթոշակ: 3-րդ հորիզոնականը զբաղեցրած 12 ուսանողի կշնորհվի 220.000-ական դրամ կրթաթոշակ: Բացի դրանից՝ ուսանողների համար նախարարությունը պատրաստել էր նվերներ՝ գրքերի տեսքով, որոնք տպագրվել են գերատեսչության դրամաշնորհներով:

Հանդիսավոր արարողությունն ուղեկցվել է Հայաստանի պետական ջազ նվագախմբի երաժիշտներից կազմված ջազային քառյակի եւ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի Ղազարոս Սարյանի անվան լարային քառյակի կատարումներով:

Միջոցառման ընթացքում տեղի է ունեցել Երեւանի թիվ 8 արհեստագործական ուսումնարանի խոհարարության, Երեւանի հումանիտար քոլեջի կարպետագործության եւ գորգագործության, Երեւանի թեթեւ արդյունաբերական քոլեջի դիզայնի եւ կարի տեխնոլոգիայի, Երեւանի զարդարվեստի ուսումնարանի փայտի գեղարվեստական մշակման եւ ոսկերչության, Երեւանի ինֆորմատիկայի քոլեջի մեխոտրոնիկայի եւ ռոբոտաշինության, Վայոց ձորի տարածաշրջանային քոլեջի գինեգործության եւ փայտի գեղարվեստական մշակման, ինչպես նաեւ Արարատի պետական քոլեջի գինեգործության բաժինների ուսանողների ցուցահանդեսը:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Դիմորդ - 2021

2918 անվճար եւ 22.300 վճարովի տեղ

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը նախատեսում է 2021/2022 ուստարվա ընդունելության համար ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել բակալավրի ու անընդհատ եւ ինտեգրացված կրթական ծրագրերով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ 2918 անվճար եւ 22300 վճարովի տեղ: Մագիստրատուրայի կրթական ծրագրով (անվճար), առկա ուսուցմամբ առաջարկվում է հատկացնել 1391 տեղ, որից 1099-ը՝ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններին:

Բուհերի 2021/2022 ուսումնական տարվա՝ բակալավրի ու մագիստրատուրայի կրթական ծրագրերով ընդունելության տեղերի հատկացման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագծերը հանրային քննարկման է դրվել իրավական ակտերի e-draft.am տեղեկատվական հարթակում:

Բակալավրիատի ծրագրով անվճար տեղերից 88-ն առաջարկվում է տրամադրել օտարերկրյա քաղաքացիներին, այդ թվում՝ 70 տեղ նախատեսված է սփյուռքահայ դիմորդների, 13 տեղ՝ միջպետական պայմանագրերով ընդունելության համար: Միջպետական համաձայնագրի շրջանակում եւս 5 տեղ կհատկացվի Երեւանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռազմաբժշկական ֆակուլտետին՝ Ղազախստանի քաղաքացիների ուսումնառության համար:

Բակալավրիատի կրթական ծրագրով Արցախի Հանրապետությանը հատկացված է 60 նպատակային տեղ (չհաշված ՀՀ ոստիկանության կրթահամալիրին եւ ՀՀ ԱԻՆ-ի ճգնաժամային կառավարման պետական ակադեմիային հատկացված տեղերը): 350 տեղ նախատեսվում է հատկացնել ՀՀ ՊՆ *«Պատիվ ունեմ»* ծրագրով ընդունելության համար: Նախատեսված է պահուստային 62 տեղ: Նախորդ տարիների նման, այս տարի եւս առանձին ընդունելության տեղեր կհատկացվեն *«Արարատյան բակալավրիատ»* ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների շրջանավարտներին:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների մագիստրատուրայում 2021/2022 ուսումնական տարում ընդունելություն կիրականացվի մի շարք նոր մասնագիտություններով (կրթական ծրագրերով)՝ *«Գեոդեզիա եւ կադաստր»*, *«Աշխարհագրական տեղեկատվական համակարգեր»*, *«Մեքենասարքավորումների ճարտարագիտություն»*, *«Հողային եւ ջրային ռեսուրսների ճարտարագիտություն»*, *«Ագրոարդյունաբերության տեխնոլոգիաներ»* եւ *«Ճշգրիտ գյուղատնտեսություն»*, *«Պետական եւ ռազմական կառավարում»*, *«Արհեստական բանականությամբ համակարգեր»*, *«Միջուկային տեխնոլոգիաների կառավարում»*, *«Նորարարությունների տնտեսագիտություն»*, *«Մարդկային ռեսուրսների կառավարում»*, *«Մարքեթինգային հաղորդակցություններ»*, *«Հանրային ծառայությունների բիզնեսի կազմակերպում եւ կառավարում»*, *«Կիրառական վիճակագրություն»* եւ այլն:

Նախագծով մագիստրատուրայի համար նախատեսված է պահուստային 9 տեղ ընդունելության մրցույթում հավասար միավորներ (ՄՈԳ) ունեցող դիմորդների համար:

Հաշվի առնվելով բուհերի կարիերայի կենտրոնների վերլուծությունները՝ շահագրգիռ կազմակերպությունների եւ բուհերի ներկայացրած հայտերի ու աշխատաշուկայի պահանջարկի հիման վրա ձեւավորվել է անվճար տեղերի քանակը: Նախապատվությունը տրվել է ճարտարագիտության, արդյունաբերության եւ տեխնոլոգիայի, ճարտարապետության եւ շինարարության, համակարգչային, ֆիզիկական, կենսաբանական գիտությունների, գյուղատնտեսական գիտությունների եւ մաթեմատիկայի ոլորտների մասնագիտություններին եւ կրթական ծրագրերին:

Շահագրգիռ կառույցներն ու անհատները նախագծի վերաբերյալ իրենց առաջարկներն ու դիտողությունները կարող են ներկայացնել մինչեւ մարտի 2-ը:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Բոլոր հայտարարությունները՝ «Կրթություն» շաբաթաթերթում

սկիզբը՝ էջ 1

Մրցույթի ժամկետներ

Սահմանվում է, որ թափուր տեղ առաջանալու դեպքում դասաժամերը տրամադրվում են նույն դպրոցում աշխատող, համապատասխան որակավորում ունեցող, տվյալ առարկան դասավանդած կամ դասավանդող՝ մինչեւ 22 դասաժամ ծանրաբեռնվածություն ունեցող ուսուցչին՝ մինչեւ թափուր տեղի համալրումը:

Մրցույթը հայտարարվում է թափուր տեղ առաջանալու օրվանից ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ հուլիսի 1-ից օգոստոսի 20-ն ընկած ժամանակահատվածում՝ օգոստոսի 20-ից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Անկախ պատճառներից՝ եթե մրցույթը չի կայանում, ապա թափուր տեղը համալրելու համար պարբերաբար (առնվազն երկու ամիսը մեկ անգամ) հայտարարվում է մրցույթ, մինչեւ հաղթող ճանաչվելը:

Այդ ընթացքում որոշակի ժամկետով աշխատանքի կարող է ընդունվել *«Հանրակրթության մասին»* ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխանող անձը: Իսկ բարձրլեռնային եւ սահմանամերձ բնակավայրերի հաստատությունների համար գործում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի՝ 2020 թվականի սեպտեմբերի 7-ի N 1162-Ա/2 հրամանով սահմանված սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի պետական ուսումնական հաստատություններ համապատասխան մասնագետի գործուղման կարգը:

Սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի գործուղված մասնագետի հետ, համաձայն վերը նշված հրամանի, պայմանագիր է կնքվում 1 տարի ժամկետով եւ մինչեւ հաջորդ ուսումնական տարվա սկիզբը առնվազն երկու անգամ հայտարարվում է մրցույթ՝ մինչեւ հաղթող ճանաչվելը: Այս պարագայում մրցույթում հաղթած մասնագետի հետ կնքվող աշխատանքային պայմանագրում ներառվում է դրույթ, ըստ որի՝ պայմանագիրն ուժի մեջ է մտնում առաջիկա ուսումնական տարվա մեկնարկից:

Մրցույթ հայտարարելը

Ուսուցչի թափուր տեղի հայտարարությունը հրապարակում է հաստատության կայքէջում եւ ներկայացնում է հրապարակման՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության, համապատասխան պետական լիազորված մարմնի (մարզպետարաններ, Երեւանի քաղաքապետարան) կայքէջերում եւ *«Կրթություն»* շաբաթաթերթում: Հայտարարությունը կարող է հրապարակվել նաեւ տեղական կամ առցանց լրատվամիջոցներում եւ հարթակներում:

Հայտարարության տեքստում նշվում է հաստատության անվանումը, գտնվելու վայրը, թափուր տեղի անվանումը, շաբաթական ժամերի քանակը, սահմանված փաստաթղթերի ցանկը, դրանց ընդունման վերջնաժամկետը, մրցույթի անցկացման օրը, ժամը եւ տեղը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերն ընդունվում են *«Կրթություն»* շաբաթաթերթում հայտարարությունը հրապարակվելու օրվանից՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում: Մրցույթն անցկացվում է փաստաթղթերի ընդունումից հետո ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Պահանջվող փաստաթղթեր

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- *դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3Χ4 չափսի,*
- *բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*
- *անձը հաստատող փաստաթուղթ,*
- *«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),*
- *ինքնակենսագրություն (Ձեւ 5),*
- *այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*
- *ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,*
- *հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*
- *որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*
- *Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:*

Հանձնաժողով

Մրցույթի օրվանից 3 աշխատանքային օր առաջ ձեւավորվում է հանձնաժողով՝

կազմված է 5 անդամից՝ տնօրեն (տնօրենի պաշտոնակատար կամ պարտականությունները կատարող), տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, համապատասխան մասնախմբի ղեկավար, մեկ ուսուցիչ՝ տվյալ հաստատությունից եւ մեկ ուսուցիչ՝ հանրակրթական այլ ուսումնական հաստատությունից՝ համաձայնությամբ: Նախագահը հաստատության տնօրենն է, որը նշանակում է հանձնաժողովի քարտուղար (նա հանձնաժողովի անդամ չէ):

Մրցույթի նիստն իրավազոր է, եթե մասնակցում են հանձնաժողովի առնվազն 4 անդամ: Իրավազոր չլինելու դեպքում նիստը կարող է հետաձգվել ոչ ավելի, քան 1 անգամ՝ մինչեւ 3 աշխատանքային օրով: Նույնը կատարվում է նաեւ այն դեպքում, երբ հավակնորդներից ոչ մեկը չի ներկայացել մրցույթի:

Հետաձգված հանձնաժողովի նիստը չկայանալու դեպքում հայտարարվում է նոր մրցույթ եւ ձեւավորվում է նոր հանձնաժողով: Մրցույթին դիտորդի կարգավիճակով կարող է մասնակցել լիազոր մարմնի ներկայացուցիչը՝ ըստ ենթակայության:

Մրցույթ՝ երկու փուլով

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի, որը կազմված է 200 հարցից: Յուրաքանչյուր հարց պետք է ունենա երեք կամ չորս ենթադրյալ պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Հարցաշարի բովանդակությունն ընդգրկում է կրթության բնագավառի օրենսդրություն եւ 30 մանկավարժական, հոգեբանական, ուսումնամեթոդական գիտելիքներ՝ համապատասխանաբար՝ 30 եւ 70 տոկոս: Հարցաշարերը հրապարակվում են նախարարության պաշտոնական կայքէջում եւ «Կրթություն» շաբաթաթերթում:

Թեստի համար տրվում է 90 րոպե ժամանակ, յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, սխալը՝ 0: Առնվազն 90 տոկոսին ճիշտ պատասխանելու դեպքում մասնակիցն անցնում է հաջորդ՝ հարցազրույցի փուլ: Արդյունքները կարող են բողոքարկվել հանձնաժողովին՝ հրապարակելուց հետո՝ մեկ ժամվա ընթացքում:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մասնակիցը վիճակահանությամբ ընտրում է մեկ հարցատոմս՝ բաղկացած 5 հարցից: Հարցերը պետք է լինեն իրավիճակային եւ ուղղված լինեն մասնակիցների մանկավարժական եւ ուսումնամեթոդական գիտելիքների, կարողությունների եւ հմտությունների բացահայտմանը: Հարցազրույցը արձանագրվում եւ ձայնագրվում է, յուրաքանչյուր հարցի պատասխան գնահատվում է առավելագույնը 2 միավոր, պատրաստվելու համար տրվում է 15 րոպե: Հարցազրույցի փուլը հաղթահարելու համար պահանջվում է առնվազն յոթանասուն տոկոս ճիշտ պատասխան: հաղթող է ճանաչվում առավելագույն միավորներ հավաքողը: Մեկից ավելի առավելագույն հավասար միավորների դեպքում կազմակերպվում է քվեարկություն: Եթե այս դեպքում էլ մեկից ավելի մասնակիցներ հավաքել են առավելագույն հավասար կողմ ձայներ, ապա ընտրվում է այն մասնակիցը, որին կողմ է քվեարկել դպրոցի տնօրենը: Հարցազրույցի արդյունքները կարող են բողոքարկվել հանձնաժողովի որոշում կայացնելուց հետո՝ մեկ ժամվա ընթացքում:

Մրցույթ չհայտարարելու դեպքերը

Մրցույթ չի հայտարարվում, եւ թափուր տեղը զբաղեցվում է ոչ մրցութային կարգով, հետեւյալ դեպքերում՝

- *տեղը թափուր է ժամանակավորապես (պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու, հղիության, ծննդաբերության եւ մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի, ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում),*
- *թափուր ժամերն առաջացել են 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում,*
- *ժամերը տրամադրվել են նույն հաստատությունում տվյալ առարկան դասավանդած կամ դասավանդող՝ մինչեւ 22 ժամ ծանրաբեռնվածությամբ ուսուցչին,*
- *առկա է նպատակային ուղեգրով մասնագիտական կրթություն ստացած թեկնածու:*

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Գերազանցության կենտրոն՝ Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում կգործի լեզվական եւ կրթական տեխնոլոգիաների *«ՀայԼինգվոՏեք»* գերազանցության կենտրոն, որը կհանդիսանա լեզվաբանության ոլորտում նորարարական հետազոտությունների զարգացման հարթակ՝ նպաստելով օժտված երիտասարդ մասնագետների ինկուբատորի ձեւավորմանը: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության ու *«Կրթական ծրագրերի կենտրոն»* ՕԻԳ-ի ներկայացուցիչներն այդ նպատակով այցելել են բուհ՝ իրականացնելու Հայաստանի բարձրագույն կրթության *«Նորարարությունների մրցակցային հիմնադրամի»* դրամաշնորհային ընթացիկ ծրագրի մշտադիտարկում: Նրանք շրջել են լեզվական տեխնոլոգիաների եւ ռեսուրսների հետազոտական լաբորատորիայի, գիտակրթական միջոցառումների սրահի եւ ուսանողների տեխնոլսարանի համար հատկացված տարածքներում, որոնք ծրագրի շրջանակում վերանորոգվել են, համալրվել անհրաժեշտ կահույքով եւ համակարգչային սարքավորումներով: Նշվել է, որ *«ՀայԼինգվոՏեք»* գերազանցության կենտրոնի ստեղծումն իրականացվում է՝ դրամաշնորհային ծրագրի ժամանակացույցով սահմանված փուլերի համաձայն, եւ կարեւոր է, որ բուհը հետեւողական լինի սահմանված ժամկետները պահպանելու, ծրագրային գործողությունները պատշաճ ժամկետներում իրականացնելու եւ ավարտին հասցնելու համար:

Բուհի դրամաշնորհային ծրագրի ղեկավար Քրիստինա Ծատուրյանի խոսքով՝ ծրագրի շրջանակում նախատեսվում է մշակել եւ ներդնել *«Հաշվողական լեզվաբանություն»* բակալավրական եւ *«Համընթաց թարգմանություն»* մագիստրոսական կրթական ծրագրեր, ինչպես նաեւ հայերենի՝ որպես օտար լեզվի իմացության մակարդակների առցանց գնահատման գործիքակազմ: Նրա հավաստմամբ՝ ընթացքում է հայերենի լիարժեք գործառնության հիմքերի ապահովմանն ուղղված թվային եւ վեբ ռեսուրսների, գնահատման ու թեստավորման գործիքակազմի ստեղծման գործընթացը, որը կնպաստի նաեւ բուհի միջազգային տեսանելիության բարձրացմանը: Ծրագրի շրջանակում ընթանում են նաեւ համընթաց թարգմանության եւ թեստավորման լինգաֆոնային կաբինետի ստեղծման նախապատրաստական աշխատանքները: Նշենք, որ ծրագրի իրականացումը մեկնարկել է 2019 թվականի հուլիսին:

Ռեկտորների խորհրդում

Քննարկվել է *«Բարձրագույն կրթության եւ գիտության մասին»* ՀՀ օրենքի նախագիծը

ԿԳՄՍ նախարարությունում կայացած՝ ռեկտորների խորհրդի նիստի օրակարգում ներառված էր Ազգային ժողովում նախորդ շաբաթ առաջին ընթերցմամբ ընդունված՝ *«Բարձրագույն կրթության եւ գիտության մասին»* օրինագծի քննարկման հարցը:

Նիստին մասնակցել է Հայաստանի պետական բուհերի 13 ռեկտոր, ինչը բավարար էր՝ քվորումի ապահովման համար: Նիստը վարել է ԿԳՄՍ նախարար **Վահրամ Դումանյանը**: Հայ-ռուսական համալսարանի ռեկտորը, ով նիստին ներկա չէր, փոխանցել էր գրավոր առաջարկներ՝ քննարկվող օրինագծի վերաբերյալ:

Նիստին մասնակից բոլոր ռեկտորներն օրինագծի առնչությամբ մի շարք մտահոգություններ են հայտնել, ինչպես նաեւ ներկայացրել գրավոր առաջարկների փաթեթներ՝ դրանք Ազգային ժողովի համապատասխան հանձնաժողովին ներկայացնելու եւ նախագծի երկրորդ ընթերցման ժամանակ քննարկելու նպատակով:

Ռեկտորները մտահոգիչ են համարում նախագծի անցումային դրույթներով սահմանված՝ 2022-24 թվականներին ինստիտուցիոնալ եւ ծրագրային հավատարմագրման պահանջը՝ նշելով, որ բուհերի բյուջեներն այդ դեպքում կարող են ունենալ ֆինանսական ճեղքվածք՝ հաշվի առնելով, որ հավատարմագրումն ենթադրում է տեւական գործընթաց եւ վճարումների կատարում: Բանն այն է, որ նախագծով ընդհուպ մինչեւ գործունեության լիցենզիայի դադարեցման խնդիր է դրվում, եթե բուհը նշված ժամկետներում հավատարմագրում չի անցնում: Բացի դրանից՝ օրինագծով առաջարկվող որոշ ձեւակերպումներ բուհերի համար կարող են առաջացնել հարկային պարտավորությունների կատարման խնդիրներ՝ հավելյալ հարկային բեռի ռիսկ հարուցելով:

Ռեկտորներից շատերի կարծիքով՝ օրինագիծը, որպես ոլորտը կարգավորող հիմնարար իրավական ակտ, բավականին մեծ թվով բացառություններ է սահմանել, ինչը հակասում է ոլորտի միասնական կարգավորման տրամաբանությանը եւ խնդրահարույց է համընդհանուր օրինաչափության եւ բուհերի հանդեպ խտրական մոտեցման տեսանկյունից: Խնդիրներ կան նաեւ մասնագիտական տերմինների սահմանման, ընդհանրապես նախագծի լեզվական եւ ոճական շարադրանքի հետ կապված: Ըստ ռեկտորների խորհրդի՝ անհրաժեշտ է շտկումներ անել՝ առաջարկվող ձեւակերպումները հստակեցնելու եւ հետագայում տարընթերցումներից խուսափելու համար:

Բարձրացվել է նաեւ բուհերի կառավարման մոդելի՝ խորհուրդների ձեւավորման եւ ռեկտորի ընտրության հարցը, ըստ որի՝ խորհրդի 9 անդամից 5-ը նշանակվելու են լիազոր մարմնի, 4-ը՝ բուհի կողմից՝ ներառյալ ուսանողական, դասախոսական եւ բուհի հետ համագործակցող գործարար համայնքը: Բուհի ռեկտորը, ըստ նախագծի, ընտրվում է կառավարման խորհրդի կողմից՝ ընտրանքային կարգով: Խորհրդի որոշմամբ՝ կարող է առաջարկվել ռեկտորի մինչեւ երեք թեկնածու, որոնցից մեկին կնշանակի լիազոր մարմնի ղեկավարը: Կարծիքներ են հնչել, որ այդ մոտեցումը բուհական ինքնավարության ու ակադեմիական ազատության սահմանափակում է եւ, ըստ էության՝ նշանակում է ռեկտորի նշանակովի մոդելի ներմուծում: Այդպիսի մոդել, ի դեպ, նախկինում կիրառվել է ԵՊՀ-ում՝ ֆակուլտետների դեկանների ընտրության ժամանակ (երեք թեկնածուից մեկին նշանակել է ռեկտորը), սակայն հետագայում որոշվել է անցում կատարել ուղիղ ընտրության կարգին:

ԿԳՄՍ նախարարը ռեկտորների բարձրացրած խնդիրների ու առաջարկների վերաբերյալ նշել է, որ դրանք կհամակարգվեն եւ կներկայացվեն խորհրդարանի քննարկմանը: Նախարարի գնահատմամբ՝ կատարյալ օրենքներ չեն լինում, եւ այս նախագիծն էլ լավագույնը լինելու հավակնություն չի կարող ունենալ, սակայն ներկա պայմաններում կարգավորման պահանջը հասունացած է. *«Բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող օրենքի նախագծի մշակմամբ զբաղվել են կրթության եւ գիտության վերջին 4 նախարարները. այն ունի տարիների պատմություն: Նախագծի հիմնական բովանդակությունը պետք է փնտրել ոչ թե ռեկտորի ընտրության կամ նշանակման, այլ կրթական ծրագրերի, կրեդիտային համակարգի եւ բազմաթիվ խորքային հարցերի մեջ: Ցանկացած բուհ, նախեւառաջ, ավանդույթների պատմություն է, եւ ռեկտորը, անկախ նրա անձից, պետք է դառնա այդ ավանդույթների կրողն ու զարգացնողը»*,- նշել է Վահրամ Դումանյանը:

Անդրադառնալով ռեկտորի ընտրության եւ բուհերի կառավարման խորհուրդների մոդելին՝ նախարարը նշել է, որ առաջարկվող լուծումը, երբ ռեկտորի 3 թեկնածուից մեկին նշանակում է լիազոր մարմնի ղեկավարը, կիրառվում է աշխարհի բազմաթիվ առաջադեմ երկրների համալսարաններում: Կա նաեւ հակառակը, այսինքն՝ ուղիղ ընտրության դրական փորձը: Հայաստանի համար այս փուլում նմանօրինակ մոդելի նախընտրությունը, ըստ նախարարի, որոշ իմաստով բխում է առկա իրավիճակից:

«Ինձ համար անհասկանալի են այն ձեւակերպումները, թե Կառավարությունը փորձում է միջամտել ռեկտորի ընտրությանը: Այդպիսի հայտարարությունները երբեմն արվում են այնպիսի տոնայնությամբ, կարծես թե խոսքը հարեւան պետության մասին է: Կառավարությունը, որպես բուհի հիմնադիր, վճռորոշ խոսքի իրավունք ունի եւ կարող է կարեւոր դերակատարում ունենալ՝ անկախ նրանից, թե տվյալ պահին ով է ներկայացնում իշխանությունը: Բուհի եւ պետության հարաբերությունները պետք է գործընկերային լինեն, իսկ բուհի ներքին մթնոլորտը՝ ակադեմիական: Պետք չէ մոռանալ, որ տվյալ պարագայում ռեկտորը պետության հիմնադրած բուհում վարձու աշխատող է՝ ընդամենը: Պետական բուհի մասին խոսելիս պետք է չմոռանալ նաեւ, որ բուհը պետական ապրանքանիշ է՝ բրենդ, հետեւաբար, պետությունն իրավունք ունի պայմաններ եւ պահանջներ դնել»,- նշել է նախարարը:

Նրա խոսքով՝ ներկայում բուհերի մի մասն ունեն հիմնադրամի, մյուսները՝ այլ կազմակերպահրավական կարգավիճակ, ինչը համակարգում խառնաշփոթ է հարուցում, եւ այդ առումով եւս միասնական կարգավորման խնդիր կա:

Հանդիպման ընթացքում բարձրացվել են նաեւ նախագծով առաջարկվող այլ կարգավորումների՝ ուսանողական խորհուրդների եւ ուսանողական մարմինների ձեւավորման, կառավարման եւ ակադեմիական (գիտական) խորհուրդների իրավասությունների հավասարակշռման, վարչական աշխատանքի համար սահմանված տարիքային շեմի (65 տարեկանից հետո վարչական աշխատանքի կատարումը սահմանափակվում է), ամբիոնի վարիչի պաշտոնը ոչ թե վարչական, այլ գիտամանկավարժական պաշտոն դիտարկելու հարցերը:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

«Էրազմուս+»

Նոր նախագծի մեկնարկ

Եվրամիության աջակցությամբ Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում իրականացվող *«Էրազմուս+»* ծրագրի շրջանակում մեկնարկում է *«Շրջանավարտների աշխատունակությունը բարձրացնելու նպատակով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության (ԱՀՈՒ) ներդրում Հայաստանի եւ Մոլդովայի բարձրագույն կրթության համակարգերում»* (WBL4JOB) նախագիծը:

Ծրագրի նպատակը եվրոպական փորձի տեղայնացմամբ աշխատանքի վրա հիմնված բուհական կրթության նոր քաղաքականության ներդրումն է, որի փորձարկումը հնարավորություն կստեղծի մշակել համապատասխան իրավական ակտեր եւ բարձրագույն կրթության ընդհանրական մոդել:

Նախագծի մեկնարկի հանդիպումը տեղի է ունեցել առցանց հարթակում: Բացման խոսքով հանդես են եկել ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արթուր Մարտիրոսյանը**, ՀՖՀՀ ռեկտոր **Բերտրան Վենարը**, Հայաստանում *«Էրազմուս+»* ծրագրի ազգային գրասենյակի համակարգող **Լանա Կառլովան**, ՀՀ-ում Եվրոպական միության պատվիրակության ներկայացուցիչը:

Նախարարի տեղակալը, կարեւորելով կրթության մոդելների արդիականացման խնդիրը, նշել է, որ մեկնարկող ծրագիրը կնպաստի աշխատանքի վրա հիմնված ուսումնառության կիրառման մոդելի ներդրմանը մասնակից երկրներում. *«Նախարարությունը՝ որպես կրթության քաղաքականություն իրականացնող լիազոր մարմին, կարեւորում է աշխատանքի վրա հիմնված ուսուցման մոդելի ներդրումը նաեւ բարձրագույն կրթության մեջ: Նախագիծը նոր հնարավորություն կընձեռի, որպեսզի բուհերի շրջանավարտներն ավելի արագ ինտեգրվեն աշխատաշուկային»*:

Արթուր Մարտիրոսյանը նաեւ կարեւորել է բուհերի, մասնավոր հատվածի եւ պետական ինստիտուտների համագործակցությունը ծրագրի իրականացման գործընթացում, ինչպես նաեւ միջբուհական համագործակցության մեջ այլ բուհերի ներգրավումը՝ հաստատակամություն հայտնելով աջակցել WBL4JOB նախագծին՝ հաջողության դեպքում այդ փորձառությունը ՀՀ այլ բուհերում ներդնելու հեռանկարով:

WBL4JOB նախագծի կոնսորցիումը ներառում է 12 կազմակերպություն, այդ թվում՝ պետական եւ հանրային կառույցներ, բարձրագույն ուսումնական հաստատություններ Հայաստանից, Մոլդովայից, Ֆրանսիայից, Բելգիայից եւ Ավստրիայից: Ծրագրում ներառված են հետեւյալ կառույցները՝

- *Հայաստանում ֆրանսիական համալսարանը,*
- *Շիրակի պետական համալսարանը,*
- *Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը,*
- *Հայաստանի բանկերի միությունը,*
- *Մոլդովայի առեւտրային կոոպերատիվ համալսարանը,*
- *Բալթիի Արեկու Ռուսոյի անվան պետական համալսարանը,*
- *Մոլդիկոբանկը,*
- *Մոլդովայի կրթության, մշակույթի եւ հետազոտության նախարարությունը,*
- *Լիոնի Ժան Մուլեն 3 համալսարանը,*
- *Ստրասբուրգի համալսարանը,*
- *Կրեմսի կիրառական գիտությունների համալսարանը:*

«Շրջանավարտների աշխատունակությունը բարձրացնելու նպատակով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության (ԱՀՈՒ) ներդրում Հայաստանի եւ Մոլդովայի բարձրագույն կրթության համակարգերում» (WBL4JOB) նախագիծը ներկայացրել է Հայաստանի ֆրանսիական համալսարանը, որը «Էրազմուս+» ծրագրի հայտարարած մրցույթում հաղթող է ճանաչվել եւ ստացել համաֆինանսավորում (նախագծի մանրամասներին կարելի է ծանոթանալ՝ այցելելով նախագծի կայք՝ www.wbl4job.com):

Նախագծի մեկնարկին նվիրված առցանց հանդիպման ժամանակ մասնակիցները քննարկել են ծրագրի իրականացման, ինչպես նաեւ աշխատանքի վրա հիմնված ուսումնառության մոդելի մշտադիտարկման եւ հաշվետվողականության մեթոդաբանությունը՝ կարեւորելով մասնակից երկրներում այս ոլորտի զարգացման գործընթացում ԵՄ պետություններում կիրառված լավագույն փորձի կիրառումը:

Կ. Մ.

Կրթության զարգացման եւ նորարարության ազգային կենտրոն

Անընդհատ երկխոսություն ուսուցչի հետ

Այս տարվա սկզբից իր գործունեությունն է սկսել *«Կրթության զարգացման եւ նորարարության ազգային կենտրոն»* (ԿԶՆԱԿ) հիմնադրամը, որը հավակնում է դառնալ կրթության զարգացման նոր ուղեղային կենտրոն եւ լրացնելու է այն մեծ բացը, որն առաջացել էր համակարգում Կրթության ազգային ինստիտուտի լուծարումից հետո: Նորաստեղծ հիմնադրամի հիմնական գործառույթներից է ուսուցիչների վերապատրաստման, մասնագիտական փորձաքննությունների եւ ընդհանրապես ուսուցչին աջակցող մեթոդական աշխատանքների իրականացումը:

Նորաստեղծ հիմնադրամի ծրագրերի եւ անելիքների մասին զրուցել ենք ԿԶՆԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար **Արտաշես Թորոսյանի** հետ:

-Պարո՛ն Թորոսյան, հիմնադրամն այժմ անձնակազմի համալրման փուլում է գտնվում, ե՞րբ կսկսեք լիարժեք աշխատել, որտեղի՞ց կամ ինչի՞ց պետք է սկսել:

-Այս պահին մենք երկու աշխատանք ենք կատարում՝ համալրում ենք աշխատակազմը: Միանգամից բոլոր հաստիքներն համալրել, իհարկե, հնարավոր չէ: Հույս ունենք, որ մարտի վերջին արդեն մեր ամբողջ անձնակազմն ընտրված կլինի: Մի քանի մրցույթ արել ենք. բոլոր տեղերի համար մրցույթ է հայտարարվելու եւ պահանջներին համապատասխան կադրերը կարող են դիմել: Կրթության ազգային ինստիտուտի նախկին աշխատակիցներն արտոնություն ունեն. հավասար արդյունքների դեպքում նախապատվությունը նրանց է տրվում: Արդեն հայտարարված մրցույթներով ընտրել ենք ԿԱԻ-ի երկու աշխատակցի: ԿԶՆԱԿ-ի բաժինները համալրած մասնագետներն անմիջապես անցնում են բովանդակային աշխատանքի՝ միանգամից սկսելով դպրոցին աջակցող նյութերի մշակումը: ԿԶՆԱԿ-ի կայքի ստեղծման աշխատանքներն այժմ ընթացքի մեջ են, հիմնական գաղափարն ու կառուցվածքն արդեն ունենք, կայքի ձեւավորման գնումն ենք նախապատրաստում:

-Կայքը, որպես հարթակ, ինչո՞վ է աջակցելու ուսուցչին:

-Մեր պատկերացրած կայքն իր ձեւով ու բովանդակությամբ ամբողջովին նորություն է լինելու. այնտեղ անընդհատ կրթական նոր նյութեր են ավելանալու՝ ուղղված դպրոցում աշխատող բոլոր մասնագետներին՝ սկսած տնօրենից, փոխտնօրենից, մինչեւ մեթոդիավորման նախագահ, գրադարանավար, 1-12-րդ դասարանների ուսուցիչ եւ դասղեկ: Բացի մեթոդական ուղեցույցներից՝ այն կունենա նաեւ օրինակելի ձեւեր: Դպրոցի ցանկացած մասնագետ, իր աշխատանքը կազմակերպելիս, կարող է օգտվել այդ օրինակելի ձեւերից: Դպրոցի կամայական աշխատող հնարավորություն կունենա ճշտելու տվյալ ամսվա համար պլանավորված աշխատանքների մեթոդները, ռազմավարությունը, եղանակները: Դպրոցում աշխատող ցանկացած մարդ պետք է իմանա, որ մեր կայքում կարող է գտնել իր գործը հեշտացնող, մասնագիտական եւ մեթոդական աջակցություն ապահովող նյութ: Իհարկե, բոլոր նյութերը միանգամից չենք կարող ունենալ՝ դրա համար ժամանակ կպահանջվի: Լիահույս ենք, որ առաջիկա երեք տարում մասնագիտական եւ մեթոդական նյութերի լիակատար բազա կունենանք: Սկզբնական փուլում նախապատվությունը կտանք օրինակելի ձեւերի հրապարակմանը: Մենք ունենալու ենք նաեւ ակտիվ ֆեյսբուքյան էջ, հասանելի ենք լինելու Ինստագրամում եւ Տելեգրամում: Այսինքն՝ հնարավոր բոլոր ձեւաչափով փորձելու ենք հասնել մեր լսարանին եւ մասնագիտական նյութեր ապահովել ինչպես Հայաստանի, այնպես էլ ՀՀ-ից դուրս աշխատող ուսուցիչների համար:

-Այդ օրինակելի ձեւերը ովքե՞ր են մշակելու, կամ էլ գուցե արդեն մշակե՞լ են:

-Աշխատանքը կատարելու են ԿԶՆԱԿ-ի աշխատակիցները, բայց մենք հնարավորություն ունենք համագործակցել նաեւ դպրոցների հետ՝ օգտագործելով նրանց մեթոդական ներուժը: Կարող ենք նաեւ կարճաժամկետ կամ միջնաժամկետ կտրվածքով որոշակի աշխատանքներ կատարելու համար փորձագետներ հրավիրել, այդ թվում՝ դպրոցներից:

-Ինչպե՞ս եք օգտագործելու դպրոցի ներուժը. ենթադրենք՝ որեւէ դպրոցում որեւէ ուսուցիչ ունի մշակված արդյունավետ մոդել՝ այս կամ այն դասի կամ թեմայի վերաբերյալ, դա հրապարակելո՞ւ եք:

-Նախ ուսումնասիրելու ենք գոյություն ունեցող փորձը եւ դրանում առկա լավագույն նմուշները ներկայացնենք համընդհանուր կիրառման՝ հրապարակելով դրանք, որպես օրինակելի կամ երաշխավորված կիրառման համար:

-Ձեր փոքրաթիվ աշխատակազմով Ինչպե՞ս եք պատկերացնում այդ ուսումնասիրությունը. եթե չեմ սխալվում բովանդակային աշխատանք կատարող անձնակազմը մոտ 4 տասնյակ է:

- Հիմա տեխնոլոգիաները շատ զարգացած են, բացի այդ՝ հիմնական տեղեկատվությունը հրապարակված է նաեւ դպրոցների կայքերում: Գործի գերակշիռ մասը կարվի էլեկտրոնային, կկատարվի նաեւ այցեր:

Մեր մասնագետները փորձառու են եւ նրանք աշխատելու են բոլոր թիրախային խմբերի հետ՝ վարելով հեռավար քննարկումներ եւ խորհրդատվություններ: Կլինեն փորձագետների ընտրության անհատական մրցույթներ, որի շրջանակում ընտրված մասնագետները կստանան որոշակի պատվեր՝ կատարելու այս կամ այն աշխատանքը՝ բնականաբար, դրա դիմաց ստանալով որոշակի վարձատրություն:

-Մասնավոր օրինակ բերենք՝ թեմատիկ պլանների օրինակելի ձեւեր առաջարկելո՞ւ եք:

- Թեմատիկ պլաններ գրում են բոլոր ուսուցիչները՝ ամեն տարի, բոլոր առարկաներից: Ընդ որում, տվյալ դասարանի տվյալ առարկայի թեմատիկ պլանավորումը գրեթե բոլորի մոտ նույնն է՝ շատ քիչ տարբերությամբ: Տարբերություններն էլ ավելի շատ կառուցվածքային են, ոչ թե բովանդակային: Եթե մենք մշակենք օրինակելի տարբերակներ, ապա ուսուցիչները կազատվեն ամեն տարի կրկնվող եւ շատ կարեւոր այդ աշխատանքից: Օրինակ՝ այս տարվա սեպտեմբերից դպրոցները թեմատիկ պլանների մշակման համար կկատարեն նախկին աշխատանքի 10-15 տոկոսն ընդամենը: Այսինքն՝ նրանք ԿԶՆԱԿ-ի կայքից համապատասխան թեմատիկ պլանը կբեռնեն, կկատարեն իրենց անհրաժեշտ ձեւափոխությունները եւ կառաջնորդվեն դրանով: Թեմատիկ պլանավորման մեջ կան հատուկ տողեր, որտեղ նկարագրված են, թե ինչպես են տվյալ աշխատանքները կատարվելու: Մենք ակտիվ հղմամբ նաեւ այդ բովանդակությունն ենք ապահովելու: Այսպես՝ եթե խոսքը դասի մասին է՝ կլինի դասի օրինակելի պլան, եթե դասավանդման մեթոդների նկարագրություն՝ նյութի բացատրման տարբեր եղանակներ: Կլինեն նաեւ տեսանյութեր, որոնցում կլինեն մասնագիտական մեկնաբանություններ՝ նախատեսված ուսուցիչների համար: Կլինեն ուսուցչի եւ դպրոցի այլ աշխատողների հետ երկխոսության տարբեր ձեւաչափեր՝ գնահատման խորագրեր, խմբային, զույգերով կամ ֆրոնտալ աշխատանքի կազմակերպման եղանակներ, աշխուժացնող վարժությունների օրինակներ, հետադարձ կապ եւ այլն:

-Ձեր կարծիքով՝ ԿԶՆԱԿ-ի առաջարկած նյութերից բոլոր ուսուցիչները կօգտվե՞ն, թե....

-Իհարկե, կարող են լինել ուսուցիչներ, ովքեր չեն օգտվի, որովհետեւ ունեն շատ լավ զինանոց: Վստահաբար, կլինեն նաեւ օգտվողներ... Եթե հիշում եք, համավարակի պիկի ժամանակ, երբ դասերն ամբողջությամբ հեռավար էին արվում, Հանրային հեռուստաընկերությամբ տեսադասեր էին եթեր հեռարձակվում, նաեւ ԿՏԱԿ-ն էր նման դասեր կազմակերպում՝ դրանք հրապարակելով իր կայքում: Այդ դասերին հետեւող ուսուցիչները, այդ թվում նաեւ փորձառուները, կարող էին տեսնել, որ բացի իրենց ավանդական դասավանդման ձեւից՝ կա նաեւ մի այլ դաս բացատրելու ձեւ, որն ավելի հեշտ է հասնում աշակերտին: Մենք խրախուսում ենք նաեւ փորձի փոխանակումը ուսուցիչների միջեւ:

-Նման փորձ Ֆեյսբուքի *«Ավագ դպրոցներ»* խմբում, որը Դուք եք վարում, կարծես, թե կա: Կա կանխակալ կարծիք, թե ուսուցիչները հիմնականում նախաձեռնող եւ նորարար չեն, ի՞նչ է ցույց տալիս Ձեր փորձը :

-Երբ մենք ֆեյսբուքյան ավագ դպրոցների խմբում խրախուսեցինք թեմատիկ պլանների փոխանակումը եւ հրապարակումը, սկզբից կար կաշկանդվածություն: Շատերին թվում էր, թե իրենց թեմատիկ պլանը կարող է քննադատվել, բայց, երբ մենք նախապես տվյալ ուսուցչի հետ առանձին նայելով թեմատիկ պլանը, դրանք սկսեցինք հրապարակել, շատ ուսուցիչներ սկսեցին ոգեւորվել եւ առաջարկել իրենց ունեցածը: Այսինքն՝ մենք օգնեցինք, որ իրենք հավատան իրենց ուժերին: Դա, իսկապես, համընդհանուր ներուժի կենտրոնացման շատ լավ միջոց է: Հավատացնում եմ, որ Ձեր ասած կանխակալ կարծիքը, թե ուսուցիչները պասիվ են, նախաձեռնող ու նորարար չեն, չափազանցեցված գնահատական է: Իրականում, եթե ուսուցիչը գտնվում է հանգիստ, ստեղծագործ միջավայրում, ապա սեւ ու սպիտակի պատկերն անմիջապես դառնում է գունավոր եւ մենք տեսնում ենք ուսուցիչների պոտենցիալը շատ ավելի դրական տեսանկյունից:

Մանկավարժությունը դինամիկ զարգացում է ապրում, կան բազմաթիվ նորույթներ, որոնց պետք է հաղորդակից դարձնել մեր ուսուցիչներին: Համոզված եմ՝ նրանք դա կվերցնեն հաճույքով:

-Վերջին տարիներին ԿՏԱԿ-ը եւս էլեկտրոնային նյութերի բավական մեծ շտեմարան է ստեղծել, արդյոք չի՞ առաջանա գործառույթների խաչաձեւում:

-ԿԶՆԱԿ-ը համագործակցելու է ԿՏԱԿ-ի հետ՝ փոխադարձաբար օգտվելով միմյանց նյութերից: Օրինակ՝ ուսուցիչների ատեստավորման կարեւոր չափանիշներից մեկը դասապրոցեսի ժամանակ ՏՀՏ գործիքների կիրառման պահանջն է: ԿՏԱԿ-ը կարող է սովորեցնել, թե որոնք են այն բոլոր հնարավոր գործիքները, որ կարող են կիրառվել դասի ժամանակ: Մեթոդների, ռազմավարությունների եւ ուղեցույցների մշակումը եւ ստեղծումը ԿԶՆԱԿ-ի հիմնական գործառույթն են:

-Ձեր հիմնական շահառուն ո՞վ է:

- Մեր բոլոր նյութերը նախատեսված են ուսուցիչների եւ ընդհանրապես դպրոցում աշխատող մասնագետների համար: Բայց մեր շահառուն նաեւ ծնողն է՝ մենք ունենալու ենք նրանց ուղղված նյութեր: Մենք այսօր ունենք մի իրավիճակ, երբ ծնողը՝ չիմանալով մանկավարժական գործի բուն էությունը, փորձում են ուսուցչին սովորեցնել, թե նա ինչպես դասավանդի: Մանկավարժությունը շատ բարդ գիտություն է. որեւէ մեկը ատոմային ֆիզիկայի մասնագետին չի փորձում ցուցում տալ, թե ինչպես պետք է ճեղքել ատոմը:

Բայց մեր հանրությունը, օրինակ, ակտիվ քննարկում է գնահատման նոր համակարգը, քննադատում եւ եզրակացություն ներկայացնում, թե որակական բացատրությունն ավելի թույլ եւ չմոտիվացնող է, քան միավորային գնահատականը: Մենք ծնողին ներկայացնելու ենք, թե ինքն ինչ ներդրում կարող է ունենալ կրթության որակի բարձրացման համար՝ աջակցելով դպրոցին, ուսուցչին եւ երեխային: Մենք աշխատելու ենք նաեւ դպրոցների կառավարման խորհուրդների հետ՝ դպրոցի կառավարման եւ բովանդակային հարցերի վերաբերյալ: Օրինակելի ձեւեր ենք առաջարկելու նաեւ խորհուրդներին:

շարունակությունը՝ էջ 7

Նկարագիր

Տարվա լավագույնները. *«Ուսուցիչ՝ 24/7 ձեւաչափով»*

Արարատի մարզի Զրաշենի միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի եւ ինֆորմատիկայի ուսուցչուհի **Հասմիկ Հակոբյանը** *«Տարվա լավագույնները»* մրցույթի հաղթողներից մեկն է:

Հասմիկ Հակոբյանը ծնվել է ուսուցչի ընտանիքում: Ավարտել է ԵՊՀ-ի *«Մաթեմատիկա»* ֆակուլտետը եւ 1990 թվականից առ այսօր աշխատում է Զրաշենի միջնակարգ դպրոցում: Ունի որակավորման առաջին աստիճանի տարակարգեր՝ *«Մաթեմատիկա»* եւ *«Ինֆորմատիկա»* առարկաներից:

Հասմիկը մրցույթին ներկայացրել է *«Ուսուցիչ՝ 24/7 ձեւաչափով»* ծրագիրը, որն արժանացել է հանձնաժողովի բարձր գնահատականին: Նախագիծն իրենից ներկայացնում է դպրոցական կայքի հարթակ, որտեղ տեղադրվում են առարկայի թեմատիկ պլանին համապատասխան տեսանյութեր, թեստեր եւ առաջադրանքներ՝ իրենց լուծումներով, ինչպես նաեւ հետաքրքրաշարժ, ակտիվացնող նյութեր: Հարթակը նպատակ ունի օգնել 5-12-րդ դասարանների աշակերտներին՝ որպես հեռավար ուսուցման այլընտրանքային տարբերակ ցանկացած պահի ունենալ թեմայի հասանելիություն:

Մեզ հետ զրույցում Հասմիկը պատմում է, որ նախագծի միտքն առաջացել է դեռեւս մի քանի տարի առաջ, երբ ԿՏԱԿ-ի պաշարների շտեմարանում փորձել է տեղադրել կամ գտնել անհրաժեշտ նյութեր: *«Կոնկրետ այս նախագծի գաղափարը ծեւավորվեց համավարակի ընթացքում, երբ ստիպված էինք անցնել հեռավար ուսուցման: Որոշեցի elearning.armedu.am կայքի միջոցով հեռավար դասընթաց անցկացնել 7-րդ դասարանի աշակերտների հետ, սակայն այդ համակարգ մուտք գործելը երբեմն դժվարություններ էր հարուցում եւ խանգարում դասընթացի արդյունավետ անցկացմանը: Ավելին՝ երբ աշակերտներիս ուղղորդում էի սահիկաշարեր դիտել, նրանք դժվարանում էին դրանք գտնել: Այդ պատճառով ստեղծեցի տեսանյութեր, թեստեր, առաջադրանքներ եւ գործնական աշխատանքներ ու դրանք տեղադրեցի մեր դպրոցի կայքում, որտեղից աշակերտներն ըստ թեմաների կարողանում էին գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը: Այսինքն՝ դասապրոցեսից զատ աշակերտները հնարավորություն ստացան մեկ անգամ եւս լսել ու տեսնել ուսուցչի բացատրությունը, վերանայել խնդիրների լուծման եղանակները, կատարել ինքնագնահատվող թեստ եւ ստուգել տեսական գիտելիքները: Արդյունքում՝ ծեւավորվեց եւս մեկ միջավայր, որտեղ աշակերտը կարող է գտնել իր հարցերի պատասխանները, եւ հենց նրանց կարծիքը հաշվի առնելով՝ որոշեցի ծրագիրս ներկայացնել մրցույթին: Չէ՞ որ ամենակարեւոր գնահատական տվողն աշակերտն է: Շնորհակալություն եմ հայտնում նաեւ մրցույթի կազմակերպիչներին՝ ծեւաչափը առավել հետաքրքիր դարձնելու եւ ոգեւորելու համար: Կարծում եմ՝ այն ապագայում ավելի շատ մասնակիցների կներառի, որից կշահի միայն կրթությունը»*,-ասում է Հասմիկը:

ՏՀՏ-ի օգտագործումը թույլ է տալիս խնայել ժամանակը դասապրոցեսում եւ ակտիվացնել ճանաչողական գործունեությունը: *«Հաճախ աշակերտները բացակայում են, եւ, ցավոք, ուսուցիչը ժամանակ չի գտնում՝ մեկ անգամ եւս դասը մանրամասն բացատրել եւ խնդիրները լուծել: Եվ այս առումով հարթակը կարող է օգնել ուսուցչին, եւ ինչու չէ նաեւ ծնողին՝ վերջինիս ազատելով ավելորդ հոգսից»*,-նշում է Հասմիկը եւ այդ համատեքստում հավելում, որ հարթակի մյուս նպատակն է՝ համախմբել ուսուցիչներին ու միասնական ուժերով ստեղծել կարգավորված պաշարների շտեմարան, որտեղից օգտվելը կլինի առավել դյուրին: *«Հարթակում կլինի աշակերտին անհրաժեշտ նյութերի ամբողջական փաթեթ՝ ըստ առարկաների եւ դասարանների, որը կհամապատասխանի թեմատիկ պլաններին: Պակասող նյութերը կարող է լրացվել ուսուցիչների ստեղծած նոր նյութերով, հետեւաբար այն մրցակցություն կառաջացնի ուսուցիչների շրջանում, որից կշահի կրթությունը»*,-իր ծրագրի մասին պատմում է Հասմիկը: Հարթակը կունենա նաեւ տարբեր առարկաների մասնագետներից կազմված խումբ: Յուրաքանչյուր առարկայի համար կնախատեսվի առանձին էջ, որը կբաժանվի ըստ դասարանների: Բացի այդ, կամավոր սկզբունքներով կկազմավորվեն



մասնագիտական խմբեր, որոնք կստեղծեն տեսանյութեր, առցանց թեստեր եւ իրենց լուծումներով առաջադրանքներ: *«Աշակերտների հետաքրքրության մեծացմանը զուգահեռ նախագիծն անընդհատ կթարմացվի, կհարստացվի ու կկատարելագործվի՝ կապված ծրագրային եւ չափորոշչային պահանջների, դասագրքերի եւ ուսումնական պլանների փոփոխությունների հետ: Հարթակի գործարկումից հետո ավելի շատ ուսուցիչներ կցանկանան մասնակցել ուսուցման գործընթացի բարելավմանը՝ ունենալով իրենց ներդրումը»*,-համոզմունք է հայտնում մեր զրուցակիցը՝ հավելելով, որ հարթակը ուսուցչի աշխատանքը գնահատելու եւ խրախուսելու շարունակական գործընթաց կլինի, որն անշուշտ կբարձրացնի ուսուցչի պատասխանատվությունը եւ նրան կմղի լուրջ մանկավարժական, ստեղծագործական աշխատանքի:

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Լույս է տեսել

Արցախագիտական նոր հրատարակություն

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ կուլտուրայի ֆակուլտետի Թանգարանագիտության, գրադարանագիտության եւ մատենագիտության ամբիոնի պրոֆեսոր, դոկտոր **Գագիկ Սուքիասյանի** հերթական՝ *«Գիրքը եւ գրադարանային-տեղեկատվական մշակույթը Արցախում»* ուսումնական ձեռնարկը նախատեսված է գրադարանային-տեղեկատվական եւ մատենագիտական բարձրագույն ուսումնական հաստատության դասախոսների, ուսանողների եւ լայն ընթերցողների համար:

Հեղինակն անդրադարձել է Արցախի գրքի եւ գրադարանային-տեղեկատվական մշակույթի պատմությանը, գրատպության պատմական զարգացման վերլուծությանը, նոր կենտրոնների ձեւավորման առանձնահատկություններին, կարեւորել Արցախի բուհական գրադարանների եւ այնտեղ Մատենադարանի զարգացման գործընթացը: Լուսաբանվել է ուսումնական ձեռնարկի նպատակը, խնդիրներն ու նշանակությունը, ներկայացնելով գրքի եւ պարբերական մամուլի պատմությունն ու գրադարանային գործի փոխադարձ կապերի զարգացման առանձնահատկությունները: Վերլուծվել է Արցախի մասին տեղեկատվագիտական աղբյուրները՝ ընթերցողին հաղորդակից դարձնելով գրադարանային-տեղեկատվական մշակույթի անցյալին, ներկային եւ զարգացման հեռանկարներին:

Ուսումնական ձեռնարկում համակողմանիորեն ներկայացված, վերլուծված ու գնահատված են ինչպես Արցախի, այնպես էլ Հայաստանի եւ Սփյուռքի գրադարանային-տեղեկատվական կենտրոնների արժեհամակարգերը, նրանց տեղեկատվական, եւ մշակութաբանական նշանակությունը: Ուսումնական ձեռնարկը հարուստ է նաեւ ընթերցողներին ուղղված գործնական առաջադրանքներով եւ հանձնարարական գրականության մատենագիտություններով, որոնք ավելի են ընդգծել աշխատանքի տեղեկատվական եւ աղբյուրագիտական արժեքը:

ԱՆՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Անընդհատ երկխոսություն ուսուցչի հետ

սկիզբը՝ էջ 6

- Վերջերս հաստատված հանրակրթության պետական չափորոշչով արմատապես փոխվում է գնահատման նոր համակարգը, ըստ որի՝ միավորային գնահատում մինչեւ 5-րդ դասարանի 2-րդ կիսամյակ, չի լինի: Ինչու՞մն է կայանում նոր մոտեցման էությունն ու նպատակը:

-Թվանշան չդնել, չի նշանակում չգնահատել: Գնահատման համակարգի փոփոխությունն հասունացած էր, քանի որ դպրոցը դարձել էր թվանշանից կախված: Ստեղծվել է մի վիճակ, երբ եւ ուսուցչի, եւ աշակերտի ու ծնողի համար կարեւոր չէ գիտելիքը, ավելի կարեւոր է թվանշանը: Շատ հաճախ թվանշանները դարձել են ձեւական. գործնականում այսօր ՀՀ-ում չկա երկտարեցություն, այն դեպքում, երբ մեր այսօրվա ունեցած կրթական արդյունքով պետք է որ ունենանք երկտարեցություն: Մենք կրթության իրական մակարդակը շատ լավ գիտենք. Երբ աշակերտը գնում է ավագ դպրոց, հնչում են ահազանգեր, որ նրանք չունեն տարրական գիտելիքներ, երբ դպրոցից գնում են բուհ, նույն բանը բուհերն են ասում: Վերջերս կատարված մի հետազոտությամբ պարզեցինք, որ մեր աշակերտները 12-րդ դասարանում ունեն շատ ավելի ցածր գիտելիքներ, քան պետք է, որ ունենան:

Նոր համակարգով մենք անցնում ենք որակական գնահատման եւ նպատակ ու պահանջ ենք դնում միավորի փոխարեն բնութագիր տալ, որպեսզի ծնողն ու երեխան շոշափելիորեն տեսնեն աշակերտի դժվարությունն ու հաջողությունը: Այսինքն՝ հասկանալի լինի՝ աշակերտը ինչն է սովորել, ինչում է թերանում, ինչը կարող է եւ ինչը չի կարող: Լինելու են սահմանված մի քանի բնութագրեր՝ ըստ մակարդակի եւ դասարանի, ուսուցիչն ընտրելու է դրանցից մեկը, որպես գնահատական տվյալ աշակերտի համար:

-Պարո՛ն Թորոսյան, Կրթության ազգային ինստիտուտի լուծարումից հետո ավելի քան 2 տարի չի կատարվել ուսուցիչների վերապատրաստում: Ի՞նչ աշխատանք է կատարելու ԿՁՆԱԿ-ն այս ուղղությամբ:

-Մասնագիտական զարգացմանը նըպաստելը մեր գլխավոր խնդիրն է: ԿՁՆԱԿ-ի հիմնական գործառույթը լինելու է վերապատրաստման մեթոդաբանության մշակումը եւ համակարգումը, իսկ ուսուցիչների բուն վերապատրաստումը, որը պարտադիր նախապայման է ատեստավորման համար, իրականացնելու են ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված կազմակերպությունները:

Ուսուցիչների վերապատրաստման երաշխավորության նոր մոտեցումներ են որդեգրվել. երաշխավորվելու են ոչ միայն կազմակերպությունները, այլեւ՝ դասընթացները: Այսինքն՝ ուսուցիչը ոչ միայն վերապատրաստող կազմակերպություն, այլեւ համապատասխան դասընթաց ընտրելու հնարավորություն կունենա:

2021 թվականին ուսուցիչների պարտադիր վերապատրաստման ծավալուն աշխատանքներ են լինելու, որպեսզի լրացնենք ԿԱԻ-ի լուծարումից հետո առաջացած բացը:

-Որպես ամփոփում՝ շնորհավորում ենք նորաստեղծ հիմնադրամի պատասխանատվությունն ստանձնելու համար՝ արդյունավետ աշխատանքի մաղթանքով:

-Շնորհակալություն:

Հարցազրույցը՝
Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

Ռազմավարություն

Մշակվում է երիտասարդության ոլորտի առաջիկա 5 տարվա ուղենշային փաստաթուղթը

Առաջիկայում հանրությանը կներկայացվի *«Երիտասարդական պետական քաղաքականության 2021-2025 թթ. ռազմավարության»* նախագիծը, որի մշակման աշխատանքային խումբն այսօր գումարել է հերթական նիստը:

Հանդիպման մասնակիցներին ողջունել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արթուր Մարտիրոսյանը**՝ ընդգծելով, որ աշխատանքային խմբի աշխատանքները սկզբում համավարակի, հետո նաեւ արցախյան պատերազմի եւ դրանից բխող խնդիրների պատճառով ժամանակավորապես առկախվել էին: Այդ ընթացքում ԿԳՄՍ նախարարությունը, աշխատանքային խմբի ջանքերով եւ Եվրամիության տրամադրած փորձագիտական աջակցության շրջանակում, մշակել է ռազմավարության նախագծի նախնական տարբերակ, որն աշխատանքային խումբն առաջիկայում կլրամշակի՝ հանրային քննարկման ներկայացնելու համար:

«Այն ենթադրում է հանրային լայն մասնակցություն եւ բոլոր շահագրգիռ կողմերի կարծիքների հավաքագրում, ի դեմս՝ մարզային երիտասարդության, ուսանողական խորհուրդների եւ այլ շահառու խմբերի, որպեսզի բոլորի ձայնը լսելի լինի: «Այս փաստաթուղթը պետք է շարունակի անցնել հանրային մասնակցության մի քանի շրջափուլ՝ ներառելով արցախյան վերջին պատերազմով եւ համավարակի մարտահրավերներով պայմանավորված վերանայումներ, որոնք ներկայում դարձել են առաջնահերթություն: Երբ բոլոր առաջարկություններն ամբողջացնենք, նախագիծը կներկայացնենք հանրության դատին՝ ունենալով երիտասարդության ոլորտի առաջիկա 5 տարվա ուղենշային փաստաթուղթը: Մեր նպատակն է մշակել այնպիսի հայեցակարգային փաստաթուղթ, որը կնպաստի երիտասարդական ոլորտի համակարգմանը ու զարգացմանը միտված թիրախային ծրագրեր, կապահովի ոլորտային այլ ռազմավարություններում երիտասարդության շեշտադրումը եւ, վերջապես, կներառի այնպիսի գործողություններ, որոնք ՀՀ միջազգային եւ այլ պարտավորություններով արդեն իսկ ամրագրված են ռազմավարական փաստաթղթերում եւ նպաստելու են երկկողմ եւ բազմակողմ ձեւաչափերով Հայաստանի Հանրապետության միջազգային համագործակցության օրակարգերին»,-նշում է Արթուր Մարտիրոսյանը եւ կարեւորում, որ փաստաթղթի մշակման գործընթացում անհրաժեշտ է շեշտադրել նաեւ միջպետական օրակարգերը՝ ինչքանով են դրանք կարեւոր մեր ազգային շահի ներկայացման ու պահպանման, երիտասարդների զարգացման, նրանց ներուժի բացահայտման եւ իրացման, մարդկային կապիտալի զարգացման տեսանկյունից:

Հանդիպման ընթացքում ռազմավարության մշակման ժամանակացույցը եւ մոտեցումները ներկայացրել է ԿԳՄՍՆ Երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ եւ շարունակական կրթության վարչության պետի պարտականությունները կատարող **Արմենուհի Պետրոսյանը**, իսկ նախագծի վերաբերյալ առաջարկությունները՝ ԵՄ փորձագետ **Արսեն Սիմոնյանը**:

Արմենուհի Պետրոսյանի խոսքով՝ ռազմավարության մշակման համար որդեգրվել են մի շարք առանցքային մոտեցումներ: Նախ, որ ռազմավարության նպատակները եւ գործողությունները պետք է հիմնված լինեն երիտասարդների իրավունքների եւ կարիքների վրա: *«Երիտասարդության ոլորտի յուրաքանչյուր տարր անհրաժեշտ է նախագծել եւ ներդնել մասնակցային գործընթացների միջոցով: Այդ իմաստով կարեւոր է երիտասարդների եւ քաղաքականություն մշակողների միջեւ կառուցողական երկխոսության հաստատումը: Բացի այդ՝ երիտասարդական ոլորտի պետական ծրագրերն ազդեցության գնահատման, վերանայման եւ ինստիտուցիոնալիզացման կարիք ունեն: Անհրաժեշտ է ապահովել նաեւ բոլոր ծրագրերի կայունության եւ տարածման մեխանիզմները, եւ մեկանգամյա ու ցածր արդյունավետություն ունեցող ծրագրերը փոխարինել կայուն եւ երկարատեւ արդյունքներ նախանշող ծրագրերով»*,-ասում է Արմենուհի Պետրոսյանը եւ ընդգծում, որ ռազմավարության շրջանակում կարեւոր է քարտեզագրել եւ ներդնել երիտասարդության ոլորտի հասարակական ու միջազգային կազմակերպությունների հետ աշխատելու փորձը: Նրա խոսքով՝ վերջիններս ունեն զգալի ներուժ եւ իրականացնում են լայնածավալ երիտասարդական ծրագրեր, որոնք իրենց մասշտաբներով համադրելի են պետական երիտասարդական ծրագրերին: Արմենուհի Պետրոսյանն անհրաժեշտություն է տեսնում համակարգել ոլորտի կառույցների աշխատանքը՝ ապահովելով համագործակցություն եւ կրկնություններից խուսափում: *«Ռազմավարությունը պետք է նպատակաուղղված լինի երիտասարդական ոլորտի հանրային եւ մասնավոր հատվածների դերակատարների գործընկերության խթանմանը եւ արդյունքների ինստիտուցիոնալիզացմանը, ինչպես նաեւ տարածի երիտասարդների հետ աշխատանքի լավագույն փորձը այլ ոլորտներում եւ խթանի միջոլորտային համագործակցությունը»*,-վստահեցնում է մեր զրուցակիցը:

Այնուհետեւ նախագիծը քննարկվել է փոքր խմբերով, եւ ներկայացվել են դրա արդյունքները:

Հավելենք, որ ռազմավարությամբ նպատակ է դրվել աջակցել երիտասարդներին՝ իրացնել իրենց իրավունքները եւ պարտականությունները, ինչպես նաեւ ապահովել նրանց տնտեսական մասնակցությանը նպաստող միջավայր, մասնավորապես, խթանել աշխատաշուկայում երիտասարդների մասնակցությունը զբաղվածության միջոցով եւ աջակցել նրանց ձեռնարկատիրական կարողությունների զարգացմանն ու նախաձեռնություններին: Նախագծով ամրագրվել է նաեւ, որ անհրաժեշտ է ապահովել երիտասարդների սոցիալական ներառումը եւ մասնակցությունը մշակութային, գիտական ոլորտներում, տարածել առողջ ապրելակերպի մշակույթը, զարգացնել երիտասարդների կամավորության եւ ոչ ֆորմալ կրթության համակարգը:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արմատական փոփոխություն ընդունելության կարգում

սկիզբը՝ էջ 1

Գործող կարգով սահմանված է, որ դիմորդներն ընդունելության դիմում-հայտը եւ փաստաթղթերը հանձնում են այն բուհում, որի մասնագիտությունն ընդունելության դիմում-հայտում հայտագրել են առաջինը: Նախագծով ամրագրվում է հայտագրման, փաստաթղթերի ներկայացման առցանց եղանակը՝ ընդունելության քննությունները կազմակերպող եւ անցկացնող Գնահատման եւ թեստավորման կենտրոնի կայքի միջոցով: Այս կարգավորումը հնարավորություն է տալիս ավելի արդյունավետ եւ կանոնակարգված դարձնել գործընթացը:

Գործող կարգով դիմորդները դիմում-հայտում հայտագրում են մինչեւ 2 անվճար եւ մինչեւ 8 վճարովի մասնագիտություն: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 5-րդ, 6-րդ տեղերում հայտագրված մասնագիտություններով բուհ ընդունվում են շատ քիչ դիմորդներ, իսկ 7-րդ տեղից հետո հայտագրված մասնագիտություններով ընդունելություն լինում է գրեթե բացառիկ դեպքերում: Բացի դրանից՝ 8 մասնագիտություն հայտագրելը նվազեցնում է մասնագիտական կողմնորոշմամբ բուհ ընդունվելու հնարավորությունը, քանի որ դիմորդները, հաճախ նախընտրած մասնագիտությունից բացի, հայտագրում են այնպիսի մասնագիտություններ, որոնք պարզապես ունեն նույն մրցութային քննությունները: Արդյունքում՝ բազմաթիվ դիմորդներ, դուրս մնալով նախընտրած մասնագիտության մրցույթից, ընդունվում են այլ մասնագիտություններով:

Նախագծով սահմանվում է, որ բուհերի ընդունելության մրցույթն անցկացվում է հիմնական եւ լրացուցիչ փուլերով: **Հիմնական փուլի մրցույթն անցկացվում է բացառապես մեկ մասնագիտության (անվճար եւ վճարովի) հայտագրմամբ**: Դիմորդն ընդունելության դիմում-հայտում լրացնում է բուհերի բակալավրի ու անընդհատ եւ ինտեգրացված կրթական ծրագրերով առկա ուսուցման մասնագիտությունների եւ ընդունելության քննությունների՝ ցանկով նախատեսված մեկ բուհի եւ մեկ մասնագիտության անվանումը, տվյալ մասնագիտությամբ սովորելու համար սահմանված ընդունելության քննությունները: Հիմնական փուլի մրցույթի արդյունքները հաստատվելուց հետո, բուհերում թափուր տեղերի առկայության դեպքում, ընդունելության քննություններից դրական միավորներ ստացած, սակայն մրցույթից դուրս մնացած դիմորդները հուլիսի 19-26-ը կարող են մասնակցել լրացուցիչ՝ թափուր տեղերի մրցույթին՝ առցանց եղանակով լրացնելով դիմում-հայտ: Լրացուցիչ փուլի մրցույթն անցկացվում է մեկ կամ ավելի բուհերի մինչեւ վեց մասնագիտության հայտագրմամբ, եթե տվյալ մասնագիտությունների առարկաներից դիմորդն ունի դրական գնահատականներ, եւ այդ մասնագիտություններում (անվճար եւ վճարովի) առկա են թափուր տեղեր: Այսպիսով՝ հայտագրման այս եղանակը հնարավորություն է տալիս մասնագիտական հստակ կողմնորոշում ունեցող դիմորդներին ընդունվել բուհ՝ իրենց նախընտրած մասնագիտությամբ:

Մասնագիտության հայտագրումն անցկացվում է երկու փուլով՝ առաջին եւ երկրորդ: Առաջին փուլն ընդգրկում է ապրիլի 15-ից մինչեւ մայիսի 10-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ հանրակրթական, նախնական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները տվյալ ուսումնական տարում ավարտող եւ նախորդ տարիների շրջանավարտ դիմորդների կողմից նախընտրած մասնագիտության համար սահմանված քննական առարկաների առցանց հայտագրումը, իսկ երկրորդ փուլը՝ հունիսի 26-ից մինչեւ հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ երկքաղաքացիների եւ օտարերկրացիների, օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատությունները տվյալ ուսումնական տարում ավարտած ՀՀ քաղաքացիների, առաջին փուլում ընդունելության դիմում-հայտ չներկայացրած ՀՀ քաղաքացիների, զորացրված կամ տվյալ տարվա մինչեւ հուլիսի 31-ը զորացրվող դիմորդների կողմից տվյալ մասնագիտության համար սահմանված քննական առարկաների առցանց հայտագրումը:

Նախագծով հստակեցվել են նաեւ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին մրցույթից դուրս ընդունվելու արտոնություններ ունեցող դիմորդների խմբերը, ներկայացվող պահանջները եւ դեպքերը: Սահմանվել է արտոնություն մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած եւ զորացրված դիմորդների համար, այն է՝ զորացրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, ընդունելության քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում, ընդհանուր մրցույթից դուրս (առանձին մրցույթով) անվճար ուսուցմամբ ընդունվելու հնարավորություն՝ ըստ ՀՀ կառավարության հաստատած տեղերի: Տվյալ մասնագիտության գծով բանակից զորացրվածների համար անվճար տեղեր հատկացված չլինելու դեպքում զորացրված դիմորդն անվճար ուսուցման մրցույթին մասնակցում է ընդհանուր հիմունքներով, իսկ վճարովի ուսուցման համակարգ ընդունվում է մրցույթից դուրս:

2012 թվականից առ այսօր ՀՀ պետական եւ ոչ պետական բուհերի ընդունելության գործընթացը կարգավորվել է Կառավարության՝ 2012 թվականի ապրիլի 26-ի N 597-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ բացառությամբ 2020-2021 ուսումնական տարվա ընդունելության՝ պայմանավորված նոր կորոնավիրուսի կանխարգելման համար հայտարարված արտակարգ դրությամբ:

Հ. Հ.

«Պարադիգմա» կրթական հիմնադրամ

«Գիրք պատմության ուսուցման. ինչո՞ւ, ինչպե՞ս»

«Պարադիգմա» կրթական հիմնադրամը *«Գալուստ Կիւլպէնկեան»* Հիմնարկության աջակցությամբ մշակել եւ հրատարակել է պատմական ակտիվ մտածողության հմտություններ զարգացնելուն ուղղված *«Գիրք պատմության ուսուցման. ինչո՞ւ, ինչպե՞ս»* գիրքը:

Գիրքը հայաստանյան կրթական միջավայրին է ներկայացնում ավելի քան չորս տասնամյակ փորձարկված պատմության վերլուծական-մեկնաբանողական ուսուցման տեսություն եւ դրանից բխող շուրջ 60 ուսումնական ռազմավարություններ:

«Ինչու՞, ինչպե՞սը» բավականին հարուստ գործիքակազմ է առաջարկում, սովորեցնում է, թե ինչպես կարելի է քարտեզն օգտագործել՝ ժամանակը վերլուծելու համար: Կա ռազմավարություն, որն առաջարկում է փոփոխություններն ուսումնասիրել անձերի միջոցով, ինչը շատ ավելի շոշափելի է դարձնում պատմության ուսումնասիրությունը: Բազմաբնույթ է նաեւ գրքում ներառված մաթեմատիկական գործիքակազմը: Օրինակ՝ Վեննի դիագրամների օգտագործումը թույլ է տալիս համադրել տարբեր տեսանկյուններ, ստանալ տարբերություններ եւ նմանություններ: Բավականին շատ են աղբյուրների հետ աշխատանք պահանջող ռազմավարությունները: Սովորողները կկարողանան դասագրքում նկարագրվածից բացի աշխատել առաջնային՝ պատմիչի աղբյուրի կամ, օրինակ, հնագիտական պեղման արդյունքների հետ: Կարելի է պատմությունն ուսումնասիրել ցույցերի պաստառների միջոցով. վերցնել որեւէ ժամանակահատված, վերլուծել ցույցերի պաստառները եւ տեսնել, թե ինչպես են դրանք փոխվում: Գիրքը կօգնի, որ երեխան մտավոր աշխատանք կատարի, եւ ոչ թե ուղղակի անգիր անի:

Գիրքը կազմվել է հայաստանյան դպրոցներում պատմության դասավանդման խնդիրները վերհանելու արդյունքում: Ռազմավարություններն ու օրինակներն այնպես են մշակվել, որ դրանք կատարելու համար ուղղորդման, օգնության կարիք չլինի: Միեւնույն գործողությունը կարելի է զարգացնել ու դարձնել երկարաժամկետ նախագիծ կամ ընդամենը մեկ դասի նյութ:

Հիմնադրամը նպատակ ունի փոխել պատմության ուսումնասիրության միջավայրը, պատմությունը բերել մեկնաբանության, վերլուծության դաշտ: Մոտ 300 էջանոց գրքի հրատարակությունն առաջին քայլն է: 2000 տպաքանակի զգալի մասն Արցախի եւ Հայաստանի դպրոցների պատմության ուսուցիչներին է փոխանցվելու:

«Այբ» հիմնադրամ

Ուսանող քիմիկոսների 2-րդ մրցաշարում հաղթեց ԵՊԲՀ-ի թիմը

Կայացավ Ուսանող քիմիկոսների 2-րդ մրցաշարը: Քիմիական գիտելիքների թեժ ու լարված պայքարում հաղթողի կոչումը նվաճեց Երեւանի պետական բժշկական համալսարանը ներկայացնող *«Օլիմպուս»* թիմը: Մրցաշարին մասնակցում էին հայաստանյան բուհերը ներկայացնող թիմեր, որոնք ցանկանում էին զարգացնել վերլուծելու, բանավիճելու եւ քիմիական հարցերի շուրջ պատասխաններ փնտրելու իրենց կարողությունները: Մրցաշարն անցավ հիբրիդային ձեւաչափով, դինամիկ եւ ակտիվ մթնոլորտում՝ գիտականության հիմքով եւ ուսանողների ստեղծագործ մոտեցմամբ:

Բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող այս նախագծի նպատակն է մեծացնել երիտասարդների հետաքրքրությունը քիմիայի նկատմամբ եւ նպաստել մեր երկրում գիտության այս ճյուղի զարգացմանն ու նոր մասնագետների ներգրավմանը քիմիայի եւ

հարակից ոլորտներում: *Ուսանողական մրցաշարը «Այբ» հիմնադրամի կողմից արդեն 11 տարի հաջողությամբ անցկացվող Պատանի քիմիկոսների մրցաշարի տրամաբանական շարունակությունն է եւ նպատակ ունի ամրապնդելու կապն ինչպես գիտության, այնպես էլ մեր երկրի տնտեսության մի շարք ոլորտների հետ:*

««Այբ»-ի քիմիական մրցաշարը բավականին մեծ հաջողություն է գրանցել դպրոցական եւ հիմա նաեւ ուսանողական շրջանակներում: Ցավոք, քիմիան այն ոլորտներից է, որը մեր երկրում ոչ բարվոք վիճակում է եւ կարիք ունի բարեփոխումների ու նորարարությունների, եւ այստեղ լուրջ անելիք ունեն ոչ միայն ավագ սերնդի ներկայացուցիչները, այլեւ կրտսեր սերնդի մասնագետները՝ մենք»,- նշեց ԵՊԲՀ 2-րդ կուրսի ուսանող, հաղթող *«Օլիմպուս»* թիմից **Մովսես Աղեկյանը**:

«Մեզ համար, որպես կրթության ոլորտում ակտիվ գործունեություն ծավալող կազմակերպության, շատ կարեւոր է մեծացնել քիմիական այս համայնքը եւ ներգրավել քիմիայի ոլորտի ավելի շատ ներկայացուցիչների, միաժամանակ ճանապարհ բացելով երիտասարդների համար: Վստահ ենք՝ դա իր հետ բերելու է ոլորտի ակտիվացում եւ քիմիա առարկայի նկատմամբ հետաքրքրության մեծացում»,- նշեց *«Այբ»* հիմնադրամի մրցույթների բաժնի ղեկավար **Տաթեւիկ Ադամյանը**:

Ագրարային համալսարան

Կգործի անասնաբուժական կրթագիտական կենտրոն

Հայաստանի ազգային ագրարային համալսարանում *«Կրթության բարելավում»* վարկային ծրագրի շրջանակում կհիմնվի *«Անասնաբուժական կրթագիտական գերազանցության կենտրոն»*, որը կնպաստի բարձրագույն անասնաբուժական կրթության արդյունավետության եւ որակի բարձրացմանը, դրանում նորարարական տարրերի եւ նոր մեթոդի՝ բիոէթիկական կրթության ներդրմանը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության եւ *«Կրթական ծրագրերի կենտրոն»* ՕԻԳ-ի ներկայացուցիչներն այցելել են բուհ՝ Հայաստանի բարձրագույն կրթության *«Նորարարությունների մրցակցային հիմնադրամի»* դրամաշնորհային ընթացիկ ծրագրի մշտադիտարկման նպատակով: Նրանք շրջել են ծրագրի շրջանակում ստեղծվելիք կլինիկայի, ուսումնական լսարանների եւ սիմուլյացիոն բաժնի համար առանձնացված համապատասխան տարածքներում: Անասնաբույժների գործնական հմտությունների զարգացմանն ու կատարելագործմանն ուղղված կենտրոնի սրահներն արդեն համալրված են համապատասխան կահույքով, մուլյաժների որոշակի խմբաքանակով, ինչպես նաեւ համակարգչային տեխնիկայով: Ընթացքում է լաբորատոր սարքավորումների եւ մուլյաժների հաջորդ խմբաքանակի ձեռքբերման գործընթացը:

ՀԱԱՀ-ի դրամաշնորհային ծրագրի ղեկավար **Սոնա Ծառուկյանի** խոսքով՝ անասնաբուժությունը Հայաստանի գյուղատնտեսության զարգացման գերակա ուղղություններից է, որի համար անհրաժեշտ կադրերի պատրաստումն իրականացնում է միայն Հայաստանի ազգային ագրարային համալսարանը: *«Ստեղծելով նմանատիպ գերազանցության կենտրոն՝ հնարավորություն կստեղծվի պատրաստել մրցունակ կադրեր, իրականացնել գիտական ծրագրեր, ինչպես նաեւ կրթական ծառայություններ մատուցել ֆերմերներին եւ գործող անասնաբույժներին»*,- նշել է ծրագրի ղեկավարը:

«Աջակցություն Հայաստանի բարձրագույն կրթության Նորարարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանը» բաղադրիչի ղեկավար **Լիանա Մամյանը** նշել է, որ, համավարակով եւ պատերազմական իրավիճակով պայմանավորված, բուհի ծրագրերից բխող գործողությունները եւ գնումների գործընթացները որոշակիորեն հետ են մնացել ժամանակացույցով սահմանված ժամկետներից: Նրա խոսքով՝ բուհը պետք է արդյունավետ եւ հետեւողական քայլեր ձեռնարկի՝ պայմանագրով սահմանված բոլոր գործողությունները պատշաճ ժամկետներում իրականացնելու եւ ծրագրով ամրագրված ցուցանիշներին հասնելու համար:

Կենտրոնի հնարավորություններն ուսումնական գործընթացում լավագույնս կիրառելու նպատակով դրամաշնորհային ծրագրի այս փուլում ստեղծվել է նաեւ համապատասխան կրթական բովանդակություն: ՀԱԱՀ-ի դրամաշնորհային ծրագրի ղեկավար Ս.Ծառուկյանի խոսքով՝ բուհն իրականացնում է աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, ինչպես նաեւ նորաստեղծ կենտրոնի հետ առնչվող մասնագիտությունների կրթական ծրագրերի վերանայում: Մշակման փուլում են կենտրոնի կառուցվածքի, գործունեության եւ անվտանգության նորմերի վերաբերյալ նորմատիվաիրավական փաստաթղթերը, ինչպես նաեւ արտահամալսարանական շահակիցների համար կարճաժամկետ դասընթացների եւ որակավորման բարձրացման համար նախատեսված կրթական մոդուլները:

Հ. Հ.

Հորդորակներ Լեզվի կոմիտեի

Թվականները ճիշտ գործածելու մասին

Բանավոր եւ գրավոր խոսքում հաճախ նկատվում են սխալներ, որոնք առնչվում են թվականների գործածությանը: Անդրադառնանք դրանցից ամենատարածվածներին:

• **Առաջին** թվականը հաճախ արտասանում են առանց **ն**-ի՝ *«առաջի»*, **երկրորդ**-ը՝ *«եկրորդ»* եւ աղավաղում բառերի հնչյունական ճիշտ պատկերը:

• Շատերն առանց **-ը** կամ **-ն** վերջնահնչյունի են արտասանում **տասը / տասն** թվականը եւ սխալ կազմում տասերկու, տասհինգ եւ այլն: Սրանց ճիշտ ձեւերը **ն**-ով են՝ **տասներկու**, **տասնհինգ, տասնյոթ** եւ այլն:

Ի դեպ, եթե այս թվականին հաջորդում է բաղաձայնով սկսվող բառ, ապա գրվում է **ը**, օրինակ՝ **տասը տարի**, իսկ եթե հաջորդում է ձայնավորով սկսվող բառ՝ **ն**, օրինակ՝ **տասն անգամ**: Նույնն է նաեւ **ինը / ինն**-ի դեպքում՝ **ինը տարեկան** եւ **ինն աթոռ** (ճիշտ է համարվում նաեւ **ինը աթոռ**-ը):

• **Ինը / ինն** թվականը երբեմն գրում են *ինը*, որը սխալ է: **Իննսուն** թվականը, բնականաբար, գրվում է երկու *ն*-ով, ըստ այդմ էլ՝ **իննսունինը** (կամ **իննսունինն**):

• Երբեմն էլ բառավերջի *ը*-ն թվականներում անհարկի է գործածվում. լսում ենք՝ վեց*ը* գիրք, ութ*ը*հոգի, չորս*ը* տարի եւ այլն: Այնինչ ճիշտ ձեւերն առանց **ը**-ի են՝ **վեց գիրք**, **ութ հոգի**, **չորս տարի**:

• Երբ *ե*-ն հաջորդում է բաղաձայնի, կանոնի համաձայն արտասանվում է /է/, հետեւաբար **երկու** եւ**երեք** միավորները կազմված տասնավորները ճիշտ է արտասանել *է*-ով՝ **քսան[է]երեք**,**հիսուն[է]երեք**, **տասն[է]երկու** եւ այլն:

• Ոմանք շփոթում են **յոթանասուն** եւ **ութսուն** թվականները եւ սխալ ասում ու գրում՝ յոթսուն, ութանասուն: Թվականակերտ «սուն» բաղադրիչը նշանակում է «տասը». 70-ի դեպքում *յոթան*գրաբարյան հոլովածեւին ավելանում է *ա* հոդակապը, ապա՝ *սուն* բաղադրիչը, 80-ի դեպքում՝ ութ+*սուն*, ըստ այդմ՝ ճիշտ տարբերակներն են՝ **յոթանասուն** եւ **ութսուն:**

• **Հիսուն** եւ **վաթսուն** թվականների կազմությունն այսպիսին է. *հի* (5) եւ *վաթ* (6) արմատներին ավելանում է *սուն* բաղադրիչը, ուստի հիցուն եւ վացուն ձեւերն արտասանական «վթարներ» են:

• Ուղղախոսական խնդիրներ կան այլ թվականների հետ եւս: Այսպես՝ **երեսուն**-ը հաճախ ասում են «եռեսուն», թեպետ արմատը **երե**(ք)-ն է (իսկ **եռ** արմատի տարբերակով ունենք **եռամսյակ**,**եռոտանի** եւ այլն):

100-ն էլ գրվում եւ արտասանվում է **հարյուր,** յ-ով (այստեղից՝ **հարյուրամյա**, **հարյուրավոր**):

0-ն արտասանվում է **զրո**, ոչ թե *զերո* (այստեղից էլ՝ **զրոյացնել**, **զրոյական**):

• Փոխառությունների դեպքում եւս առաջնորդվում ենք հայերենի ուղղագրության կանոններով: Ուստի **միլիոն** եւ **միլիարդ** բառերը գրվում են ոչ թե կրկնակ բաղաձայնով, այլ մեկ *լ*-ով:

• Հաշվում ենք այսպես՝ մեկ, **երկու**, երեք… **երկու** թվականին **ս** է ավելանում, երբ այն հոդ կամ հոլովական վերջավորություններ է ստանում՝ **երկուսը, երկուսի**, **երկուսին**, **երկուսից**,**երկուսով**:

• Հայտնի է, որ հայերեն տառերն ունեն նաեւ թվային արժեք: Այդ արժեքով գործածված տառը պետք է արտաբերել թվային արժեքին համապատասխան: Օրինակ՝ Աշոտ Բ, Վազգեն Ա անունները պետք է ասել՝ **Աշոտ Երկրորդ**, **Վազգեն Առաջին**: Ի դեպ, գրության ժամանակ թվական բաղադրիչը՝ որպես անվան բաղադրիչ, գրվում է մեծատառ:

• Հռոմեական թվանշանները դասական թվականներ են, այսինքն՝ IV, VIII, XI նշանակում են **չորրորդ**,**ութերորդ, տասնմեկերորդ**, եւ *րդ* մասնիկն ավելացնելն ուղղակի սխալ է (սխալ է, օրինակ, *VI-րդ*, քանի որ լինում է վեցերորդ+րդ): Իսկ հռոմեական I-ի դեպքում՝ սխալ է *I–ին* գրելը (ինչպես նաեւ՝ *1-րդ*): Ճիշտը սա է՝ 1-ին դասարան (կամ I դասարան):

• Թվարկման ժամանակ հայերեն տառերը դասական թվականի արժեք են ստանում: Այսպես՝ **ա)**, **բ.**, **ե**/դառնում են **առաջին**, **երկրորդ**, **հինգերորդ** եւ այլն: Այդպես էլ՝ 1., 2) – **առաջին, երկրորդ** եւ այլն:

Ամփոփելով **հորդորում ենք.**

հաշվի առնել վերոնշյալ դիտարկումները եւ թվականներ գործածելիս խուսափել սխալներից:

Հայերեն ընդունելի համարժեքներ ունեցող օտար բառերից խուսափելու մասին

Պատերազմական շրջանում բոլորիս մտքերն ու գործողություններն ուղղված են առաջնագիծ: Այս ընթացքում կարեւոր են նաեւ ճիշտ արտահայտած միտքը, ընտրված բառերի տեղին գործածությունը: Հատկապես պաշտոնական եւ հրապարակային խոսքը մեծ ուժ ունի, եւ անհրաժեշտ է, որ այն լիովին հասկանալի լինի հայ հանրությանը: Հետեւաբար, հորդորում ենք այս իրավիճակում եւս խուսափել օտար բառեր գործածելուց, նախապատվությունը տալ միայն հայերեն բառային միավորներին:

Ներկայացնում ենք օտար բառերի հայերեն համարժեքների ցանկ:

1. ագենտ – գործակալ
2. ադապտացիա – հարմարում
3. ալյանս – դաշինք, միություն
4. բատալիոն – գումարտակ
5. բինոմ – երկանդամ
6. բլոկադա – շրջափակում, պաշարում
7. բուքսիր – 1. քարշակ, 2. քարշանավ
8. դեզերտիր – դասալիք
9. դեզինֆորմացիա – ապատեղեկատվություն
10. դեկլարացիա – 1. հռչակագիր, 2. հայտարարագիր, 3. հայտարարություն
11. դեմոգրաֆիկ – ժողովրդագրական
12. դեֆեկտ – թերություն, արատ, պակասություն
13. դիկցիա – առոգանություն
14. դիստանցիա – հեռավորություն, տարածություն
15. դիսֆունկցիա – խաթարում, խանգարում
16. էկզիստենցիալ – գոյութենական
17. էքսպանսիոնիզմ – ծավալապաշտություն
18. ինստինկտ – բնազդ
19. ինտեգրացիա – համարկում, ներգրավում
20. ինտերվենցիա – 1. (ռազմ.) ներխուժում, 2. (ռազմ. եւ ֆինանս.) միջամտություն
21. լաբորատորիա – 1. աշխատանոց, 2. փորձարան
22. մերկանտիլ – 1. շահամոլ, չարչի, 2. շահամոլական, շահախնդրական
23. նարատիվ – պատում
24. պլենար – լիագումար (նիստ), լիակազմ
25. պրովոկացիա – սադրանք
26. ռեպրեսիա – ճնշում, բռնաճնշում, հալածանք
27. ստերիլ – մանրէազերծ, մանրէազերծված
28. տեռորիստ – ահաբեկիչ
29. ցիկլ – 1. շրջափուլ, պարբերաշրջան, 2. շարք, 3. շրջապտույտ
30. օկուպանտ – զավթիչ, նվաճող

* * *

Ուրիշ մշակույթների ու ժողովուրդների հետ շփումները, հաղորդակցությունը նպաստում են մեր լեզու օտար բառերի թափանցմանը, որ բնական ընթացք է: Սակայն բոլորովին ընդունելի չէ օտարաբանությունների անհարկի կիրառումը, երբ դրանց համարժեքները կան ու գործածելի են հայերեն գրավոր եւ բանավոր խոսքում:

Ներկայացնում ենք օտար բառերի եւ դրանց հայերեն համարժեքների հերթական ցանկը: Հորդորում ենք նախապատվությունը տալ հայերեն բառերին:

1. անոմալիա – շեղում, անկանոնություն
2. ավանտյուրա – 1. արկածախնդրություն, 2. բախտախնդրություն
3. արգումենտացիա – փաստարկում
4. բանալ – տափակ, անհամ
5. բյուլետեն – 1. հիվանդաթերթիկ (անաշխատունակության թերթիկ), 2. քվեաթերթիկ, 3. տեղեկագիր, տեղեկագրքույկ
6. գուրման – նրբաքիմք, համադամասեր
7. դելիկատես – նրբախորտիկ
8. դեմարկացիա – սահմանագծում
9. դելիմիտացիա – սահմանազատում
10. էլեկտորատ – ընտրազանգված
11. ինֆանտիլ – մանկամիտ, տհաս, թերզարգացած
12. իրոնիա – հեգնանք
13. լեվլ – մակարդակ, աստիճան
14. կոնցեպտ – հասկացություն
15. կոնֆիսկացիա – բռնագրավում, առգրավում
16. մագիա – մոգություն
17. մատրիարխատ – մայրիշխանություն
18. պատրիարխատ – հայրիշխանություն
19. պրեստիժ – 1. հարգ, 2. հեղինակություն
20. ռեգուլյար – կանոնավոր, կարգավորված, համաչափ
21. ռետրոսպեկտիվ – հետահայաց
22. ռեցիդիվիստ – կրկնահանցագործ
23. սկրեպ – ամրակ
24. օկուպացիա – զավթում, գրավում
25. ֆրեսկա – որմնանկար

Հովհաննես Թումանյանը մշակույթի մասին

սկիզբը՝ նախորդ համարում

* * *

...վաղուց բոլորիս համար ճշմարտություն է դառել, թե ինչ ահագին չափերով ազդում է շրջապատող կյանքը առհասարակ գրականության վրա: Որքան շրջապատը լայն է ու ընդարձակ, բազմակողմանի ու բազմաբովանդակ, այնքան մեծ է գրողը եւ նրա շրջահայացը, նույնքան մեծ ու հարուստ է նաեւ գրականությունը:

Ժողովուրդներն ունենում են հազար ու մի դարդ-ցավ, այրող-մաշող խնդիրներ, սակայն կան խնդիրներ, որոնք համաժողովրդական են եւ որոնք իրենց հաստատուն կնիքը դնում են գրականության վրա:

* * *

...ձեր սրտալի վերաբերմունքը, ձեր սերն ու խրախուսանքը առանձին արժեք ունեն գրողների ընկերության մեջ: Սրտալի խոսքն ու անկեղծ ոգեւորությունը սիրտ կտան մեզ ու ոգեւորություն, իսկ սիրտն ու ոգեւորությունը որ լինեն, էլ մեզ բան չի պակասիլ: Նրանք են տալիս կյանքում ամեն բան, նրանք են տալիս եւ հանճարեղ գրական գործեր ու ստեղծագործություններ: Խորհրդաստ կերպով Նիցշեն ասում է. գնահատել, կնշանակի ստեղծել: Եվ այսօր դուք, որ եկել եք գնահատելու հայոց գրականությունը, եկել եք ստեղծելու, այսօր դուք ստեղծողներ եք: Եվ այսպիսով միայն կստեղծեք ու կունենաք մեր գրականությունից ավելի լավ գրականություն ու մեզանից ավելի լավ գրողներ: Դուք պետք է իմանաք, որ մեզանում հայ գրողը միշտ իրեն մենակ է զգացել ու լքված, այլեւ շատ ու շատ անգամ ենթարկված հալածանքի ու նեղության, որ դուք իմացել եք միայն սուր դեպքերի ժամանակ: Նրա թիկունքին կանգնած չի եղել իր հարազատ ժողովուրդը: Սակայն սրանով չեմ մեղադրում մեր ժողովրդին, որ նոր-նոր է ազատվում խավարի դարավոր կապանքից, որ նույնպես ենթարկված է եղել միշտ հազար ու մի նեղության, եւ թվով էլ մեծ չի: Բայց փոքր ժողովուրդներն էլ, երբ գիտակցության են գալիս, երբ նրանց մեջ խաղում է կենդանության շունչը, կարողանում են առաջ բերել մեծ գրականություններ: Օրինակ առեք Հին Հունաստանը իր Աթենքով, մի՞թե թվով մեծ էր նա, մի՞թե մեծ էր Շեքսպիրի Անգլիան, մի՞թե մեծ են այսօր Շվեցիան ու Նորվեգիան, մի՞թե մեծ են Դանիան, Բելգիան կամ Հոլանդիան, որ տալիս են մեծ գեղարվեստագետներ ու գրողներ:

